

## **10.**

**ԴԱՄԱՑԱՆՑԸ ԵՎ ՄԵՆՔ. ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ**

### **Կարեն Վրօսեսչյան, ՍամՎել Մարտիրոսյան**

#### **Ներածություն**

Մեր օրերում կարծեն թե արդեն կարիք չկա որևէ մեկին ապացուցելու համացանցի (ինտերնետի) կարևորությունը տեղեկատվության (այդ թվում նաև քարոզության) տարածման գործում։ Համացանցի աճին զուգահեռ, նրանում անընդհատ ավելանում են նորանոր ծառայություններ, որոնք ստեղծում են նոր հնարավորություններ ու միաժամանակ վտանգներ՝ տեղեկատվական դաշտում։

Հոդվածի նպատակն է հայկական ընթերցողին ծանոթացնել, նախ, տվյալ պահին տեղեկատվության տարածման ամենակարևոր ծառայություններին ու հարթակներին, այնուհետև՝ այդ հարթակներում տեղի ունեցող հայամետ ու հակահայկական գործունեությանը։ Հոդվածը բաղկացած է երեք մասից՝ ա. ընդհանուր ակնարկ համացանցի ներկայիս իրավիճակի մասին; բ. համացանցում հայկական ու հակահայկական ներկայության ակնարկ; գ. եզրակացություններ։

**Անհրաժեշտ նախնական դիտողություններ.**

Ա. Պետք է հաշվի առնել, որ համացանցի վերաբերյալ տվյալներն ու դրանց վրա հիմնված ցանկացած վերլուծություն շատ արագ կորցնում են իրենց արդիականությունը, ինչը բխում է համացանցի խիստ դժնամիկ բնույթից։

Բ. Ժամանակի ու տեղի սղության պատճառով չենք անդրադարձել մի շաղք բնագավառների, այն է՝ հայկական, թուրքական, աղբբեջանական լոբբիստական կազմակերպությունների ներկայությանը համացանցում, ինչպես նաև կրոնական հաստատությունների կայքերին։ Քննարկված բնագավառներից էլ ամեն մեկը ներկայացված է մի քանի (մեր կարծիքով՝ տիպիկ) օրինակներով, հակառակ դեպքում հոդվածը կվերածվեր կայքերի անիմաստ թվարկման միայն։

### **Տեղեկատվության տարածման համացանցային ենթակառույցների ընդհանուր ակնարկ**

#### 1. Որոնման համակարգեր ու կայքադարաններ (Search Engines & Web Directories)

Համացանցը լի է բազմապիսի տեղեկատվությամբ՝ տեքստերով, պատկերներով, տեսանյութերով։ Համաձայն Netcraft վիճակագրական ծառայության տվյալների, 2006 թ. նոյեմբերին համացանցում գործող հանգույցների թիվն անցավ **100 մլն-ից<sup>1</sup>**։ Տվյալների այսպիսի հսկայական ծավալում կողմնորոշվելու բարդության հետևանքով առաջնահերթ կարևորություն են ստացել ավտոմատացված որոնման համակարգերն ու հղումների դասակարգված հավաքածուներ պարունակող, այսպես կոչված, կայքադարանները։ Ամեն ոք, ում առջև համացանցում տեղեկատվություն տարածելու խնդիր կա, պետք է առաջին հերթին ուշադրություն դրանի որոնման համակարգերի վրա, փորձելով իրեն հետաքրքրող թեմաներով որոնման արդյունքներում առաջնային տեղեր գրավել։

Ավտոմատացված որոնման համակարգերի աշխատանքի սկզբունքը կրնատ ձևով կարելի է ներկայացնել հետևյալ կերպ։ նախ, հատուկ մի ծրագիր (այսպես կոչված՝ bot կամ crawler «մագլցող») կարդում է վեբէջի պարունակությունը և այն պահեստավորում տվյալների շտեմարան-

---

<sup>1</sup> Netcraft November 2006 Web Server Survey ([http://news.netcraft.com/archives/2006/11/01/november\\_2006\\_web\\_server\\_survey.html](http://news.netcraft.com/archives/2006/11/01/november_2006_web_server_survey.html))

**Ներում (database):** Հավաքված պարունակությունից առանձնացնելով հղումներն այլ կայքերի ու վեբ-էջերի վրա, այնուհետև մագլցող ծրագիրն այդ հղումներով առաջանում է գետի հաջորդ էջերը, որոնք նույնպես պահեստավորվում են, և այսպես անվերջ: Փաստորեն, ժամանակի ցանկացած պահին համացանցում վիտում են որոնման համակարգերի հարյուր հազարավոր «մագլցողներ»՝ անցնելով կայքից կայք ու հավաքելով տեղեկատվություն: Տվյալների շտեմարանում կուտակված տեղեկատվությունն այնուհետև դարձվում է հասանելի որոնման համակարգերի կայքերի միջոցով, ինչպիսին է օրինակ Google.com-ը, ուր այցելուն, որպես հարցում ներկայացնելով իրեն հետաքրքրող բառերը կամ բառակապակցությունները, ստանում է այդ խոսքերը պարունակող վեբ-էջերի վրա տանող հղումների ցուցակ:

Հնայած համացանցում գործող հարյուրավոր որոնման համակարգերի, որոնումների ձնշող մեծամասնությունը բաժին են ընկնում ընդամենը մի քանի խոշոր որոնման համակարգերին: Օրինակ՝ ԱՄՆ համացանցի օգտագործողները գերադասում են հետևյալ որոնման համակարգերը.<sup>2</sup>

<b>Google (<a href="http://www.google.com">www.google.com</a>)`</b>	<b>45–49%</b>
<b>Yahoo Search (<a href="http://search.yahoo.com">search.yahoo.com</a>)`</b>	<b>24–28%</b>
<b>MSN Search (<a href="http://search.msn.com">search.msn.com</a> կամ <a href="http://live.com">live.com</a>)`</b>	<b>9–12%</b>
<b>Ask Network (<a href="http://www.askjeevs.com">www.askjeevs.com</a> և գործընկեր այլ կայքեր)`</b>	<b>5.5%</b>
<b>AOL (<a href="http://search.aol.com">search.aol.com</a>)`</b>	<b>5.5–6%</b>
Իուսախոս համացանցում (Իունետ) իրավիճակն այլ է. <sup>3</sup>	
<b>Яндекс (<a href="http://www.yandex.ru">www.yandex.ru</a>)`</b>	<b>50%</b>
<b>Google (<a href="http://www.google.com">www.google.com</a>)`</b>	<b>21%</b>
<b>Rambler (<a href="http://www.rambler.ru">www.rambler.ru</a>)`</b>	<b>18%</b>

<sup>2</sup> Google market share inches up, CNET News, November 21, 2006 ([http://news.com.com/2061-10812\\_3-6137761.html](http://news.com.com/2061-10812_3-6137761.html))

<sup>3</sup> LiveInternet.ru: переходы с поисковых систем (<http://www.liveinternet.ru/stat/rus=searches.html?period=month>)

**Mail.ru ([go.mail.ru](http://go.mail.ru), իրականում օգտագործում է**

**Յանդեքսի որոնման համակարգը)**`

6%

**MSN ([search.msn.com](http://search.msn.com) կամ [live.com](http://live.com))`**

1.4%

Այս տվյալները, ի՞արկե, մոտավոր են ու ենթակա հաճախակի ու դժվար կանխատեսելի փոփոխությունների: Ինչ վերաբերում է հայաստանյան օգտագործողների նախընտրություններին, ապա հեղինակները տեղյակ չեն այս հարցի շուրջ որևէ վիճակագրության գոյության մասին: Ելնելով անձնական փորձից, կարելի է բավական վստահությամբ ասել, որ հիմնականում օգտագործվում է Google որոնման համակարգը: Հայերեն տեքստերի որոնում կարող են կատարել նաև Yahoo-ն ու MSN-ը:

Ավտոմատացված որոնման համակարգերից բացի, օգտագործվում են նաև հղումների դասակարգված շտեմարաններ պարունակող կայքեր՝ կայքադարաններ: Լուրջ կայքադարանների կարևորությունը ոչ այնքան կայքին իրական այցելուներ բերելու մեջ է կայանում, այլ այն բանում, որ որոնման համակարգերն ավելի բարձր են դասում հեղինակավոր կայքադարաններում գրանցված կայքերը: Կայքադարանները հիմնականում կազմվում են կենդանի մարդկանց՝ խմբագիրների կողմից, այսպիսով ապահովելով կայքադարաններում համեմատաբար բարձրորակ կայքերի ընդգրկումը: Հիշատակման արժանի են հետևյալ կայքադարանները.

**Open Directory (DMOZ - <http://dmoz.org/>)` համացանցում**

ներկայումս գործող կայքադարաններից ամենակարևորն է, որովհետև այս կայքադարանների տվյալների շտեմարանը օգտագործվում է մի շարք խոշոր որոնման համակարգերի և այլ կայքերի կողմից: Ընդգրկումն անվճար է, խմբագիրները կամավորներ են: Կախված կոնկրետ բաժնի խմբագրի զբաղվածությունից, կայքի ընդգրկումը կարող է ամփսներ տեսել: Բազմալեզու է, ունի նաև հայերեն ու ռուսերեն բաժիններ:

**Yahoo Directory (<http://dir.yahoo.com/>)` վերջին տարիներին կորցրել է իր նախկին կարևորությունը: Կայքերի մեծամասնության համար ընդգրկումը վճարովի է:**

**Յանդեքս կատալոգ (<http://yaca.yandex.ru/>)` ոռուսական Յանդեքսը որոնման համակարգին կից կայքագրարան է:** Շատ կարևոր է Յանդեքսի որոնման արդյունքներում լավ դիրքեր զբաղեցնելու համար: Հիմնականում ընդգրկվում են ոռուսալեզու կայքերը:

**Համացանցի հայկական մասի նմանատիպ ծառայություններից նշենք [www.circle.am](http://www.circle.am) կայքը, որը, թեպետև, բարիս բուն իմաստով կայքագրան չէ, այլ կայքի այցելուների քանակի հաշվարկման համակարգ, բայց որոշ պատճերացում է տալիս հայկական կայքերի այցելուների քանակի, ինչպես նաև գոյություն ունեցող կայքերի մասին:**

Որոնման համակարգերի աշխատանքի տեխնոլոգիաների անընդհատ բարդացման հետևանքով կայքավարներից (webmasters) բավականին գիտելիքներ են պահանջվում որոնման համակարգերի միջոցով իրենց կայքերն արդյունավետ գովազդելու համար: Քիչ չեն դեպքերը, երբ բավականին հարուստ ու արժեքավոր պարունակություն ունեցող հայկական կայքերն զբաղեցնում են վատ դիրքեր որոնման արդյունքներում, ինչը խիստ նվազեցնում է այդ կայքերի այցելուների քանակը:

Վերջին տարիներին որոնման համակարգերի միջոցով կայքեր գովազդելը դարձել է առանձին մասնագիտություն՝ «որոնման համակարգերի [համար] օպտիմիզացիա» (Search Engine Optimization – SEO): Որոշ սկզբնական տեղեկություններ որոնման համակարգերի արդյունավետ օգտագործման մասին կարելի է ստանալ հետևյալ կայքերից: անգլերեն՝ [www.searchenginewatch.com](http://www.searchenginewatch.com), [www.webmasterworld.com](http://www.webmasterworld.com); ռուսերեն՝ [forum.searchengines.ru](http://forum.searchengines.ru)

## 2. Էլեկտրոնային ՉԼՄ-Ներ և ավտոմատացված լրահավաք ծառայություններ

**Համացանցային ՁԼՄ-ները, որոնք նախկինում ավանդական ՁԼՄ-ների՝ թերթերի, հեռուստատեսության ու ռադիոյի համեմատ դիտվում էին ընդամենը որպես օժանդակ կառուցյներ, այժմ ոչ միայն լուրջ դիրքեր են զբաղեցնում տեղեկատվության տարածման շուկայում, այլև շարունակում են ընդարձակել իրենց ներկայությունը՝ սպառնալով ավան-**

դական ԶԼՄ-ներին, մասնավորապես տպագիր մամուլին<sup>4</sup>: Օրինակ՝ համաձայն ամերիկան տվյալների, 2005 թ. օրական ավելի քան 50 մլն ամերիկացիներ օգտագործել են համացանցային ԶԼՄ-ները որպես նորությունների առաջնային աղբյուր: Համեմատության համար՝ 2002թ. այդ թիվը կազմում էր 27 մլն<sup>5</sup>: Աճում է նաև ոռուալեզու էլեկտրոնային ԶԼՄ-ների ընթերցողների քանակը<sup>6</sup>:

Մեկ այլ՝ հարաբերաբար նոր ծառայություն են ավտոմատացված լրահավաքները, որոնք հնարավորություն են տալիս որոնել միաժամանակ հազարավոր էլեկտրոնային ԶԼՄ-ների կայքերում՝ հրատարակված նորությունների տեքստերում: Այդպիսի լրահավաքների օրինակ է հանդիսանում [News.Google.com](http://News.Google.com)-ը, որն անգլերենով նորություններ է հավաքում ավելի քան 4500 էլեկտրոնային լրատվական աղբյուրներից: Այս ծառայությունը տրամադրում է տեղեկատվություն նաև այլ լեզուներով, այդ թվում ոռուերենով: Որունետում առաջնային դիրք է գրավում [News.Yandex.ru](http://News.Yandex.ru) լրահավաքը; բացի այդ գործում են մի շարք այլ նմանատիպ համակարգեր՝ **Новотека ([www.novoteka.ru](http://www.novoteka.ru)), [www.RedTram.ru](http://www.RedTram.ru)** և այլն:

Համացանցային ԶԼՄ-ների զարգացմանը զուգահեռ աճում է դրանց ազդեցությունն ավանդական ԶԼՄ-ների վրա: Սա առանձնապես ճշմարիտ է տեղական նշանակության թերթերի ու հեռուստակայացմանների համար, ինչն առաջին հերթին պայմանավորված է տեղեկատվության համացանցային աղբյուրների հասանելիությամբ ու համեմատաբար էժանությամբ: Օրինակ՝ Հայաստանի կամ **Ադրբեյջանի պարբերականներից** ու հեռուստաալիքներից շատերը հղումներ են տալիս համացանցային ԶԼՄ-ների ու տեղեկատվական գործակալությունների վրա, կամ նույ-

<sup>4</sup> Гутенберг 2.0, 19.10.2006 (<http://mediarevolution.ru/audience/behavior/397.html>)

<sup>5</sup> Study: More readers turning to the Web for news. CNET News, March 23, 2006 ([http://news.com.com/Study+More+readers+turning+to+the+Web+for+news/2100-1025\\_3-6053387.html](http://news.com.com/Study+More+readers+turning+to+the+Web+for+news/2100-1025_3-6053387.html))

<sup>6</sup> Gallup измерила аудиторию ведущих сайтов, habrahabr.ru, 17 ноября 2006 (<http://www.habrahabr.ru/article/1553/>)

<sup>7</sup> About Google News ([http://news.google.com/intl/en\\_us/about\\_google\\_news.html](http://news.google.com/intl/en_us/about_google_news.html))

նիսկ օգտագործում են համացանցից հայթայթված նորություններ ու վերլուծություններն առանց որևէ հղումի:

### 3. Համացանցային համայնքներ՝ ֆորումներ, բլոգուֆերա և այլն

Համացանցում խմբային հաղորդակցման, փորձի փոխանակման, համագործակցելու ու մշտական կապ պահպանելու բազմապիսի ձևեր կան: 90-ականներին ամենատարածվածը newsgroup կոչվածներն էին, որոնք աստիճանաբար ձևափոխվեցին համացանցային ֆորումների: Սրանք համացանցային բանավեճային խմբեր են, որոնց մասնակիցները օգտագործում են ծածկանուններ կամ հենց իրենց իրական անունները: Ֆորումները լինում են ընդհանուր կամ թեմատիկ, սովորաբար իրենց շուրջ են հավաքում համախորհներ տարբեր երկրներից: Newsgroup-ներ գոյություն ունեն և այսօր ([groups.google.com](http://groups.google.com), [groups.yahoo.com](http://groups.yahoo.com), [groups.msn.com](http://groups.msn.com)), սակայն դրանց ժողովրդականությունն անկում է ապրում: Ֆորումների «ոսկե դարը» երկի թե կարելի է համարել 90-ականների վերջը – 2000-ականների առաջին կետը:

Տվյալ պահին առավել աշխուզժ են նեղ մասնագիտական ֆորումները և ըստ հետաքրքրությունների ակումբները: Բացի այդ, գրեթե բոլոր ժամանակակից ցանցային լրատվամիջոցները ընթերցողներին հնարավորություն են տալիս քննարկել այդ կայքերում տեղադրվող նյութերը, նորությունները:

Մյուս կողմից՝ համացանցում գոյություն ունեն մեծ քանակի ազգային կամ տարածաշրջանային ֆորումներ, ուր հանդիպում են նույն ազգության ներկայացուցիչներ կամ նույն տարածաշրջանի բնակիչներ: Օրինակ՝ գոյություն ունեն բազմաթիվ հայկական ֆորումներ: Նմանատիպ մի քանի ֆորումներ ունեն և աղբբեշանցիները, վրացիները (օրինակ՝ [www.nukri.org](http://www.nukri.org)), հրեաները (օրինակ՝ [jews.co.il](http://jews.co.il)) և այլն:

Թեպետ ֆորումներն այսօր էլ գեռ բավական ժողովրդականություն են վայելում, այնուամենայնիվ, սկսում են աստիճանաբար զիշել իրենց դիրքերը, այսպես կոչված, բլոգերին (blogs) կամ «համացանցային օրագրերին»:

**Ի՞նչ է բլոգը:** Blog բառն առաջացել է անգլերեն web log արտահայտության հապավումից, որը նշանակում է համացանցային մատյան, այն է՝ համացանցում վարվող օրագիր: Համացանցում գործող բլոգերի ու դրանց հարակից այլ ծառայությունների ամբողջությունն անվանում են «բլոգոսֆերա»:

Օրագրերի ծաղկումն ու ֆորումների ժողովրդականության կրճատումը կարելի է, հավանաբար, մասսամբ բացատրել հետևյալ գործոններով.

**ա.** Փորում ստեղծելն ու սպասարկելը, ի տարբերություն օրագրերի ստեղծմանը, պահանջում է ավելի խորը տեխնիկական գիտելիքներ և ավելի շատ ժամանակ, որը շարքային օգտագործողի համար հեշտ գործ չէ.

**բ.** Փորումների օգտագործողները վաղ թե ուշ սկսում են հասկանալ, որ իրենց գրածները, փաստորեն, լիովին հսկվում են ֆորումի տնօրինության կողմից և աշխատում են ի շահ ֆորումի տիրոջը. շատ դեպքերում ֆորումի շարքային օգտագործողի գրած տեքստը հանդիսանում է տնօրինության համար շահույթի աղբյուր.

**գ.** Շարքային օգտագործողների իրավունքները ֆորումներում սահմանափակ են՝ ֆորումի անօրինությունը ի վիճակի է փակել ցանկացած ըմբոստ մասնակցի բերանը, անկախ այն բանից, թե ով է իրավացի բանավեճում, ընդ որում, արտաքսված մասնակցի բոլոր գրածները մնում են ֆորումում և շարունակում են աշխատել ի շահ ֆորումի տերերի.

**դ.** Օրագրերը, որոնք, ըստ էության, «մեկ գերասանի ֆորումներ» են, հնարավորություն են տալիս օրագրի հեղինակին ինքնուրույն քաղաքականություն վարել, որոշել, թե ով իրավունք ունի մեկնաբանել իսկ ով՝ ոչ.

**ե.** Ստեղծվել են մի շարք ծառայություններ, որոնք դուրսացնում են բլոգերի փոխազգեցությունը միմյանց հետ, օրինակ՝ հնարավորություն տալիս տեսնել, թե օրագրում տեղադրված հոդվածի վրա այլ օրագրերից ովքեր են հղումներ անում; հեշտությամբ գտնել նույն հետաքրքրություններ ունեցող այլ օրագրերի հեղինակների:

Փաստորեն, օրագիրը մի կողմից անհատի համար իր անհատականության դրսելուման միջոց է, մյուս կողմից՝ յուրօրինակ լրատվամիջոց: Օրինակ՝ նյու Օոլեանի ջրհեղեղի ժամանակ ամենահրատապ լուրերը

գեպքի վայրից ստացվում էին բլոգերի միջոցով: Մասնավորապես քաղաքում գտնվող DirectNIC ընկերության աշխատողները հատուկ մի օրագրում «ուղիղ եթերի» ռեժիմում իրազեկում էին հանրությանն աղետի գոտում վերջին իրադարձությունների մասին<sup>8</sup>: Նույնը վերաբերում է անցյալ 1-2 տարիների ընթացքում աշխարհում տեղի ունեցած այլ կարևոր իրադարձություններին<sup>9</sup>:

Տվյալ պահին բլոգերը որակական ու քանակական բուռն զարգացում են ապրում: Լստ Technorati ([www.technorati.com](http://www.technorati.com)) բլոգերի որոնման համակարգի տվյալների, 2006 թվականի հոկտեմբերին համացանցում գործում էր 57 միլիոն բլոգ: Դրանց քանակը կրկնապատկվում է միջինն ամեն 230 օրում: Օրական բացվում է մոտ հարյուր հազար նոր բլոգ<sup>10</sup>: Համացանցային օրագրեր են պահում ինչպես հասարակ մարդիկ, այնպես էլ հայտնի գրողներ, կինոաստղեր, քաղաքական գործիչներ և այլոք: Բլոգեր ունեն երգչուհի Մադոննան ([madonnasthoughts.blogspot.com](http://madonnasthoughts.blogspot.com)), հանրաճանաչ գրողներ Ովլյամ Գիբսոնը ([williamgibsonbooks.com/blog/archive.asp](http://williamgibsonbooks.com/blog/archive.asp)) և Սերգեյ Լուկյանենկոն ([doctor\\_livsy.livejournal.com](http://doctor_livsy.livejournal.com)): Մեծ Բրիտանիայի թագավորական ընտանիքի անդամ, արքայազն Չարլզը իր անձնական կայքում տեսարձում է վարում, ուր տեղադրվում են տեսանյութեր իր և իր մտերիմների կյանքից ([www.princeofwales.gov.uk/video/](http://www.princeofwales.gov.uk/video/)):

Բազմաթիվ ընկերություններ, այդ թվում նաև լրատվամիջոցներ, իրենց կայքերում տեղադրում են ինչպես կորպորատիվ, այնպես էլ առանձին աշխատողների բլոգեր: Որպես օրինակ նշենք բրիտանական BBC տեղեկատվական գործակալության կայքի վրա գործող մեր նախկին հայ-

<sup>8</sup> Lester Haines, Heroic New Orleans hosting outfit battles on. The Register, 2005-09-01. [http://www.theregister.co.uk/2005/09/01/new\\_orleans\\_hosting\\_survivors/](http://www.theregister.co.uk/2005/09/01/new_orleans_hosting_survivors/)

<sup>9</sup> Савел Мартиросян. «Цензура в интернете: Запад не отстает от Востока», <http://cnews.ru/reviews/articles/index.shtml?2006/02/16/196225>

<sup>10</sup> State of the Blogosphere, October, 2006. <http://www.sifry.com/alerts/archives/000443.html>

րենակից Մարկ Գրիգորյանի բլոգը, ուր ներկայացվում է հեղինակի կարծիքն ԱՊՀ երկրներում կատարվող իրադարձությունների մասին:

Բլոգերի աճին նպաստում են նաև մի շարք կայքեր, որոնք բոլոր ցանկացողներին անվճար տրամադրում են բլոգեր ստեղծելու հնարավորություն, ինչպես նաև օգնում են ընդհանուր հետաքրքրություններ ունեցողներին հաղորդակցվել միմյանց հետ (այս տիպի կառուցները հաճախ անվանում են սոցիալ ցանցեր՝ *social networks*):

Համաձայն վերջերս կատարված մի հետազոտության, ԱՄՆ դեռահասների (12–17 տարեկան) 55 %-ը օրագրեր է վարում կամ մասնակցում է որևէ սոցիալ ցանցի, ընդ որում, դրանցից 85 %-ն ունի օրագիր MySpace ([www.myspace.com](http://www.myspace.com)) կայքում<sup>11</sup>, որը 2005 թվականին գննեց Ռուփերթ Մերդուկի (Rupert Murdoch) տեղեկատվական կայսրության կողմից, և իր 106 մլն-ից ավելի օգտագործողներով<sup>12</sup> այժմ աշխարհի ամենաայցելվող կայքերի տասնյակում է գտնվում<sup>13</sup>:

Նմանատիպ ծառայություններ են առաջարկում մի շարք այլ խոշոր հարթակներ, որոնց վրա օրագրերի քանակը միլիոնների է հասնում. Blogger.com / Blogspot.com (պատկանում են Google ընկերությանը); Blogsome ([www.blogsome.com](http://www.blogsome.com)); SixApart ընկերությանը պատկանող TypePad.com, Vox.com և LiveJournal ([www.livejournal.com](http://www.livejournal.com)) համակարգերը; Վերջինս հնարավորություն է տալիս հետեւել այլ օրագրերի լրահոսներին ու մեկնաբանել ուրիշների գրածները: Այս կայքը նշանավոր է նրանով, որ չնայած գտնվում է ԱՄՆ-ում, բայց անգլալեզու օգտագործողներից հետո ամենաբազմաքանակը ուստաիսու օգտագործողներն են: 2006 թ. հոկտեմբերի տվյալների համաձայն, LiveJournal-ի միայն

<sup>11</sup> Pew Internet & American Life Project, Social Networking Websites and Teens: An Overview. Jan 2007. [http://www.pewinternet.org/pdfs/PIP\\_SNS\\_Data\\_Memo\\_Jan\\_2007.pdf](http://www.pewinternet.org/pdfs/PIP_SNS_Data_Memo_Jan_2007.pdf)

<sup>12</sup> "MySpace music deal poses multiple threats", The Register, 2006-09-08. [http://www.theregister.co.uk/2006/09/08/myspace\\_threatens\\_record\\_labels/](http://www.theregister.co.uk/2006/09/08/myspace_threatens_record_labels/)

<sup>13</sup> Top 500 Sites. [http://www.alexa.com/site/ds/top\\_sites?ts mode=global&lang=none](http://www.alexa.com/site/ds/top_sites?ts mode=global&lang=none)

ոռուսալեզու հատվածն ամսական 4,4 մլն մարդ էր այցելում<sup>14</sup>: Խուսալեզու բլոգեր տրամադրող խոշեր կայքերից նշենք *LiveInternet* ([www.liveinternet.ru](http://www.liveinternet.ru)), *Diary.ru* ([www.diary.ru](http://www.diary.ru)), *Блоги@Mail.Ru* ([blogs.mail.ru/](http://blogs.mail.ru/)), *Рамблер-Планета* (<http://planeta.rambler.ru/>): Մեծ ժողովրդականություն ունեն նաև մասնագիտացված նպանատիպ կայքերը, ինչպիսիք են, օրինակ՝ *FlickR* ([www.flickr.com](http://www.flickr.com)) – ֆոտոորագրերի կայքը, իսկ Խունեսում՝ *Фото.Сайт* ([www.photosight.ru](http://www.photosight.ru)) կայքը:

Որոնման համակարգերը նույնպես սկսել են առանձնակի ուշադրություն դարձնել բլոգոսֆերայի վրա: Վերջին տարվա ընթացքում բլոգերով առանձին որոնելու հնարավորություն սկսել է տրամադրել *Google-ը* ([blogsearch.google.com](http://blogsearch.google.com)), ոռուսական *Yandex* որոնման համակարգը ([blogs.yandex.ru](http://blogs.yandex.ru)): Բայց վերջինի, օրական *LiveInternet.ru* օրագրերում հրատարակվում է 40000-ից ավելի գրառում, *Diary.ru`* ավելի քան 17000 գրառում, *Блоги@Mail.Ru`* մոտ 14000, *Рамблер-Планета`* 2000 ավելի: Բացի այդ կան մասնագիտացված՝ միայն ու միայն բլոգերում որոնող համակարգեր, ինչպես օրինակ՝ արդեն հիշատակված *Technorati* ([www.technorati.com](http://www.technorati.com)) համակարգը:

Բլոգոսփերայի զարգացմանը զուգահեռ հայտնվեցին մի շարք այլ օժանդակ ծառայություններ, որոնք տեղեկատվության տարածման ընագավառում աստիճանաբար վերածվում են ինքնուրուցն կարևոր միավորների: Խոսքն այն կայքերի մասին է, որոնք հնարավորություն են տալիս իրենց մոտ ազատ կերպով տեղադրել լուսանկարներ, տեսահոլովակներ, երաժշտական և այլ տիպի ֆայլեր, որոնց վրա այնուհետև կարելի է հեշտությամբ հղումներ դնել օրագրերում ու ֆորումներում: Այսպիսով, օրինակ՝ հետաքրքիր այուժե ունեցող տեսահոլովակի վրա հղումը կարող է մի քանի օրում տասնյակ հազարավոր օրագրերով տարածվել, դառնալով ողջ համացանցի բուռն քննարկումների առարկա: Այդ

<sup>14</sup> Лидер на рынке блогов Six Apart и онлайн-медиакомпания «Суп» заключили соглашение о партнерстве для развития сообщества LiveJournal, SUP.com, 18/10/2006. [http://www.sup.com/news\\_11.html](http://www.sup.com/news_11.html)

տիպի կայքերից ամենանշանավորն է YouTube ([www.youtube.com](http://www.youtube.com)) համակարգը, որի վրա այցելուները կարող են պահեստավորել իրենց հետաքրքրող տեսանյութեր և այնուհետև այլ կայքերից հղումներ տալ այդ տեսահղուվակների վրա: YouTube-ում տեղադրված տեսահղուվակների դիտումները հասնում են օրական 70 միլիոնի<sup>15</sup>: 2006 թ. նոյեմբերին այն գնվեց Google ընկերության կողմից 1,65 միլիարդ դոլարով<sup>16</sup>, և սա այն դեպքում, որ հենց ինքը՝ Google ընկերությունը ևս ունի Google Video ([video.google.com](http://video.google.com)) կոչված նմանատիպ մի ծառայություն: Google-ի հետ մրցակցելու նպատակով նման ծառայություն է պատրաստում շահարկել Microsoft-ը, իսկ Sony ընկերությունը համացանցում տեսանյութերի տարածման շուկայում իր դիրքերն ամրապնդելու համար գնեց նմանատիպ մեկ այլ խոշոր կայք՝ [Grouper.com](http://Grouper.com)<sup>17</sup>: Զնայած, որ այս կայքերում նյութերի ճնշող մեծամասնությունը ժամանցային բնույթ ունեն (երաժշտական տեսահղուվակներ, հեռուստասերիալներ, հաղորդումներ և այլն), բայց նաև աշխուժորեն և արդյունավետ օգտագործվում են գովազդային, քարոզական ու տեղեկատվական տեսահղուվակներն արագ ու չնշին ծախսերով տարածելու համար:

### 3.1. Համացանցային օրագրերը որպես հաղափական գործիք

Համացանցային օրագրերի համակարգի զարգացումը որպես վտանգ է դիտվում մի շարք երկրների իշխանությունների կողմից, քանի որ բլոգերում հաճախ տեղադրվում է քննադատական, հակասետական բնույթի տեղեկատվություն: Վերջին մի քանի տարիների ընթացքում իրանում, Զինաստանում տասնյակի օրագրերի հեղինակներ ձերբակալ-

<sup>15</sup> About YouTube. <http://www.youtube.com/t/about>

<sup>16</sup> Eric Auchard, Google closes YouTube deal; denies new Web bubble. Reuters, 2006-11-14.

<sup>17</sup> «Изобретательный поглотитель», MediaRevolution, 2006-10-10. <http://mediarevolution.ru/advertiser/markets/387.html>

վել ու դատվել են «հակապետական գործունեության» մեղադրանքով<sup>18</sup>: «Լրագրողներն առանց սահմանի» միջազգային կազմակերպությունը նույնիսկ հատուկ ձեռնարկ է պատրաստել այդ երկրներում գործող բլոգերների համար (որոնց արդեն անվանում են կիբերդիսիդենտներ). այն սովորեցնում է, թե ինչպես վարել բլոգ՝ միաժամանակ խուսափելով հատուկ ծառայությունների հետապնդումներից<sup>19</sup>: Բայտ նույն կազմակերպության տվյալների, աշխարհում տվյալ պահին բանտարկված են 60 բլոգերներ և համացանցում այլ տեղեկատվական գործունեություն ծավալած անձինք, որոնցից 50-ը Չինաստանում են<sup>20</sup>: Արդեն իսկ գոյություն ունեն բլոգերների իրավունքները պաշտպանող կազմակերպություններ, որոնք պահանջում են նրանց տրամադրել լրագրողի կարգավիճակ: Ի դեպ, նույնիսկ ԱՄՆ-ում մինչև այժմ էլ վիճում են այն մասին, թե կարելի՞ է արդյոք համարել համացանցային օրագիր վարելը ժուռնալիստիկա, թե՞ ոչ<sup>21</sup>:

2006թ. հոկտեմբերին SixApart ընկերությունը, որին պատկանում է LiveJournal.com-ը, վաճառեց ոռուսաստանյան ՍՈՒՓ ([www.sup.com](http://www.sup.com)) ընկերությանը LiveJournal-ում եղած բոլոր ոռուսալեզու օրագրերը, ինչպես նաև ԱՊՀ երկրների քաղաքացիների կողմից ստեղծված օրագրերը «սպասարկելու» մենաշնորհի իրավունքը: ՍՈՒՓ-ի տնօրենն է Խումետում մի շարք խոշոր նախագծերի (օրինակ՝ [Lenta.ru](http://Lenta.ru)) հեղինակ ու ղեկավար Անտոն Նոսիկը<sup>22</sup>, որը շատերի կողմից ընկալվում է որպես ծայրահեղ հակառական հայացքների տեր մարդ: Այս լուրը խիստ վրդովմունք

<sup>18</sup> Reporters Without Borders. The Internet under surveillance 2004. [http://www.rsf.org/rubrique.php3?id\\_rubrique=433](http://www.rsf.org/rubrique.php3?id_rubrique=433)

<sup>19</sup> [http://www.rsf.org/rubrique.php3?id\\_rubrique=542](http://www.rsf.org/rubrique.php3?id_rubrique=542)

<sup>20</sup> [http://www.rsf.org/rubrique.php3?id\\_rubrique=119](http://www.rsf.org/rubrique.php3?id_rubrique=119)

<sup>21</sup> Alan Sipress, Too Casual To Sit on Press Row? Washington Post, January 11, 2007. <http://www.washingtonpost.com/wp-dyn/content/article/2007/01/10/AR2007011002424.html>

<sup>22</sup> Անտոն Նոսիկի անձնական օրագիրը գտնվում է <http://dolboeb.livejournal.com/հասցեով>:

առաջացրեց LiveJournal-ում օրագրեր ունեցող ոռուս ազգայնականներից շատերի մոտ: Որպես արդյունք, մի քանի հազար ոռուս բլոգերներ տեղափոխվեցին ուրիշ կայքեր: Հարկ է նշել, որ Անտոն Նոսիկը նաև ծայրահեղ թուրքամետ է. ամիսներով ապրում է Թուրքիայում, իր անձնական օրագրում Թուրքիան ու Մոռաթաֆա Քեմալի իմաստությունն ու «մարդասիրությունը» գովարանող գրառումներ անում:

Հավանաբար, ազգայնականների կասկածները, որ Նոսիկը կօգտագործի իր դիրքը քաղաքական նպատակներով, այնքան էլ անհիմն չէին. LiveJournal համակարգն աշխուժորեն օգտագործվում էր ոռուս ծայրահեղականների կողմից՝ 2006 թ. նոյեմբերի 4-ին Մոսկվայում ծրագրված երթը (այսպես կոչված Ռուսկий մարշ) կազմակերպելու համար: Մոսկվայի կառավարությունն արգելել էր այս միջոցառումը, և կազմակերպիչները նախատեսել էին անցկացնել շքերթը իշխանությունների համար անսպասելի մի վայրում: Որպես իրազեկման միջոց օգտագործվում էին LiveJournal-ում տեղադրված օրագրերը և բջջային հեռախոսակապը: Սակայն երթի նախօրեին ինչպես Livejournal կայքը, այնպես էլ երթի անցկացման մոտավոր վայրի շրջանում գտնվող բոլոր բջջային օպերատորների կայաններն անսպասելիորեն անշատվեցին՝ խափանելով կազմակերպիչների ծրագրերը: Հետագայում օպերատորների ներկայացուցիչներն ակնարկել էին, որ համապատասխան կարգադրություն էին ստացել իրավապահ մարմիններից<sup>23</sup>:

#### 4. Վիքիպեդիա

Վիքիպեդիան ([www.wikipedia.org](http://www.wikipedia.org)) ներկայացնում է բազմալեզու համացանցային հանրագիտարան, ուր ամեն ոք, գրեթե առանց սահմանափակումների, կարող է գրել ու խմբագրել հոդվածներ: Հանրագիտարանի ստեղծողների կարծիքով, մասնակիցների քանակի աճին գուգահեռ, այն կդառնա ինքնակառավարվող ու ինքնազարգացող մի համա-

<sup>23</sup> Националистов оставили без SMS и ЖЖ, CNews.ru, 2006-07-11. <http://www.cnews.ru/news/top/index.shtml?2006/11/07/216288>

կարգ, և անորոշ կամ կեղծ տեղեկատվությունն աստիճանաբար դուրս կմղվի որակյալ պարունակությամբ։ Իրականում քիչ չեն դեպքերը, երբ վիճելի հարցերին վերաբերող հոդվածները գալունում են անվերջ վիրտուալ կոիվների բեմահարթակ, ուր ամեն մի կողմը փորձում է տեքստը խմբագրել ըստ իր համոզմունքների՝ չնշելով կամ ձևափոխելով հակառակորդների գրածները։ Սա բերում է այն բանին, որ Վիքիպեդիայի կառավարիչներն ստիպված են լինում արգելել առանց նախնական թույլտվության որոշ հոդվածների խմբագրում։ Այսպիսի վիրտուալ հակամարտության տիպիկ օրինակ կարող են ծառայել Արցախի մասին հոդվածները հանրագիտարանի անգլերեն ու ռուսերեն բաժիններում<sup>24</sup>։

Այնուամենայնիվ, օրեցօր ավելի շատ մարդիկ են օգտագործում Վիքիպեդիան որպես տարբեր բնագավառների վերաբերյալ գիտելիքների աղբյուր։ Միայն 2006թ. հոկտեմբերի ընթացքում Վիքիպեդիան այցելել է 38.9 մլն մարդ<sup>25</sup>։ Թեպետև, հասկանալով հանրագիտարանի տրամադրած տվյալների անհուսալիությունը, շատերն այն օգտագործում են որևէ առարկայի կամ իրադարձության մասին նախնական համառոտ տեղեկատվություն ստանալու համար։ Վիքիպեդիայի ժողովրդականությանը նպաստում է նաև այն, որ հանրագիտարանի բոլոր տեքստերն ու նկարների մեծ մասը հնարավոր է ազատորեն օգտագործել, ինչից և օգտվում են բազմաթիվ այլ կայքեր (օրինակ՝ [answers.com](#) կայքը), այսպիսով էլ ավելի տարածելով Վիքիպեդիայի նյութերը։

## 5. P2P ցանցեր

P2P (Peer-to-Peer) ցանցերը հնարավորություն են տալիս երկու օգտագործողների համացանցի միջոցով անմիջական կազ հաստատել իրենց համակարգիչների միջև ու փոխանակել ֆայլեր։ Հիմնականում այս

<sup>24</sup> History of Nagorno-Karabakh ([http://en.wikipedia.org/wiki/History\\_of\\_Nagorno-Karabakh](http://en.wikipedia.org/wiki/History_of_Nagorno-Karabakh)), Nagorno-Karabakh (<http://en.wikipedia.org/wiki/Nagorno-Karabakh>) և այլն

<sup>25</sup> U.S. Traffic to Online Gambling Sites Plummets Following Anti-Gambling Legislation, 2006/11/14 (<http://www.internetadsales.com/modules/news/print.php?storyid=8488>)

ցանցերը օգտագործվում են երաժշտություն, տեսանյութեր (նույնիսկ DVD-դրակի լիամետրած կինոնկարներ) ու համակարգչային ծրագրեր փոխանակելու նպատակով։ Հետաքրքրող ֆայլերը կարելի է գտնել այդ ցանցերի հետ աշխատող հատուկ որոնման համակարգերի միջոցով։ Այս ցանցերի հիմնական առավելությունն այն է, որ մեկ ֆայլի տարրեր մասերը կարելի է միաժամանակ մի քանի այլ օգտագործողներից ստանալ ինչը՝ նախ արագացնում է ստացման գործընթացը, երկրորդը՝ հնարավորություն է տալիս շարունակել ֆայլի ստացումը, նույնիսկ եթե ուղարկողների մի մասն անջատվի ցանցից։ P2P ցանցերը շատ հարմար են գրեթե առանց ծախսերի մեծ (հարյուրավոր մեգաբայթեր) չափսերի ֆայլերի տարածման համար։

Ներկայիս ամենամեծ P2P ցանցերն են. eDonkey/Overnet և BitTorrent. Համաձայն մի հետազոտության, P2P ցանցերով փոխանցվող <sup>26</sup> տվյալների ծավալը (traffic) գերազանցում է վեբով անցնող տվյալների ծավալից։

## 6. Այլ ոլորտներ

Համացանցում մեծ հեղինակություն վայելող հարթակներից կարելի է նաև նշել.

- Ակադեմիական հաստատությունների կայքեր, այն է՝ ճանաչված համալսարանների, գրադարանների, համապատասխան հրատարակությունների ու պարբերականների կայքերը։
- Հեղինակավոր միջազգային կազմակերպությունների կայքեր, *օրինակ՝ UNICEF, UNISON, ELLAC, Համաշխարհային Բանկ և այլն*։
- Ազգերիկ ոչ-պետական (իրավապաշտպան և ոչ միայն), կազմակերպությունների կայքեր, *օրինակ՝ Amnesty International ([www.amnesty.org](http://www.amnesty.org)), Human Rights Watch ([www.hrw.org](http://www.hrw.org)), Council on Foreign Relations ([www.cfr.org](http://www.cfr.org)) և այլն։ Համացանցի ուսուական սեգմենտում արժանի է հիշատակման «Մեմորիալ» կազմա-*

<sup>26</sup> CacheLogic Research: P2P in 2005 ([http://www.cachelogic.com/home/pages/studies/2005\\_01.php](http://www.cachelogic.com/home/pages/studies/2005_01.php))

կերպության կայքը ([www.memo.ru](http://www.memo.ru)), մասնավորապես այդ կայքի «Կովկասյան հանգույց» բաժինը ([kavkaz.memo.ru](http://kavkaz.memo.ru)).

- Արևմտյան երկրների պետական կազմակերպությունների կայքեր՝ ԱՄՆ պետդեպարտամենտ, Պենտագոն, ԿՀՎ, Եվրամիության կառույցներ և այլն:
- Պակաս հեղինակավոր են, բայց, այնուամենայնիվ, որոշակի կշիռ ունեն ԱՊՀ երկրների պետական կազմակերպությունների կայքերը:

Թեև վերը նշված կազմակերպություններից և ոչ մեկը չի կարելի համարել բացարձակապես հուսալի և անկողմնակալ տեղեկատվության աղբյուր, սակայն դրանք ընկալվում են որպես այդպիսին ընթերցողների մեծամասնության կողմից: Այսպես՝ գրեթե անհնարին է ԱՄՆ կամ արևմտաեվրոպական ցանկացած երկրի քաղաքացու առջև վիճարկել ամերիկյան պետդեպարտամենտի կամ Եվրախորհրդի կայքում բերված Հայաստանի վերաբերյալ տվյալները: Այդպիսի կայքերում հրատարակված տեղեկատվությունն այնուհետև տարիներ շարունակ մեջբերվում է ԶԼՄ ու հետագոտողների կողմից:

Այս տիպի հարթակներում տեղեկատվության տարածումը մասնավոր անձանց կամ փոքր պետությունների ներկայացուցիչների համար թեև գերբարդ, բայց և ոչ անհնարին խնդիր է: Այդ պատճառով պետք է առավելագույնս օգտագործել այս տիպի կայքերում տեղեկատվություն տեղակորելու ցանկացած հնարավորություն, ինչպես նաև նկատված սխալները շտկելու փորձ անելը:

Տեղեկատվության ևս մեկ աղբյուր (համապատասխանաբար՝ նաև տարածման միջոց) են հանդիսանում էլեկտրոնային գրադարանները: Վերջին 2–3 տարիների ընթացքում թվային գրադարանների բնագավառում մեծ աշխուժություն է տիրում, կապված այդ բնագավառ այնպիսի «ծանրակշիռ խաղացողների» մուտք գործելու հետ, ինչպիսիք են Google, Microsoft և Yahoo ընկերությունները:

**Google Books** ([books.google.com](http://books.google.com)) – որոնում է կատարում տարրեր տարիներին հրատարակված գրքերից կազմված հսկա

գրադարանում: Հնիթերցողին ցուց են տրվում գտնված տեքստը պարունակող գրքերի էջերը: Քանի որ գրքերի մեծամասնությունը պաշտպանված են հեղինակային իրավունքով, ապա այդպիսի գրքերի որոշ հատվածներ սահմանափակ են ցուցադրվում: Այնուամենայնիվ, Google Books-ը մնում է ցանկացած տիպի գրականության ամենահարուստ և ամենաչժամանակակից մեկը:

**Project Gutenberg** ([www.gutenberg.org](http://www.gutenberg.org)) – համացանցում գործող ամենահին թվային գրադարանն է: *Տարբեր երկրներից հազարավոր կամավորներ սկանավորում ու թվայնացնում են հին (սպառված հեղինակային իրավունքներով) գրքեր: Պարունակում է մոտ 20000 գրքերի տեքստեր:*

**MSN Books Search** ([books.live.com](http://books.live.com)) – առայժմ տեքստեր է փնտրում սպառված հեղինակային իրավունքներով գրքերում՝ թրիտանական գրադարանից, կալիֆոռնիայի ու Տորոնտոյի համալսարանների գրադարաններից: Անվճար հնարավորություն է տալիս ամբողջությամբ ստանալ այդ գրքերի էլեկտրոնային տարբերակները Adobe Acrobat ձևաչափով (.pdf). Հետագայում նախատեսվում է ավելացնել և չսպառված հեղինակային իրավունքներով գրքեր:<sup>27</sup>

Բավականին մեծ թվային արխիվ ունի նաև ԱՄՆ կոնգրեսի գրադարանը ([www.loc.gov](http://www.loc.gov)), առանձնապես հետաքրքիր է հին լուսանկարների հավաքածուն, ուր կան XX դարի սկզբի լուսանկարներ Հայաստանից ու Թուրքիայից: Հարուստ թվային արխիվներ են տրամադրում ամերիկյան համալսարանների գրադարանների կայքերը: Ռունետում աշքի են ընկնում Մաշկովի գրադարանը ([www.lib.ru](http://www.lib.ru)), ինչպես նաև ոռու գրականության ու բանահյուսության Ֆունդամենտալ Էլեկտրոնային գրադարանը ([www.feb-web.ru](http://www.feb-web.ru)): Վերջինս ներկայացնում է նախահեղափո-

---

<sup>27</sup> Adam Turner, Million dollar grant challenges Google and Microsoft online libraries, ITWire, 21 December 2006: <http://www.itwire.com.au/content/view/8252/53/>

իսական շրջանի գիտական արժեք ունեցող ռուսալեզու բազմաթիվ գրքեր ու փաստաթղթեր:

### Հայկական ու հակահայկական ներկայությունը համացանցում

#### 1. Հայաստանում համացանցից օգտվողների քանակը

Համացանցի հայկական սեգմենտի յուրահատկություններից մեկն այն է, որ ազգությամբ հայ օգտագործողները համացանցում ներկայացված են հիմնականում Հայաստանից դուրս գտնվողներով, ինչը, մեր կարծիքով, առաջին հերթին պայմանավորված է Հայաստանում համացանց մուտք գործելու բարձր գներով: Համեմատենք 1.5Մբիթ արագությամբ երկկողմանի կապի գծի վարձակալման ամսական վարձը՝ նյու Յորքում, Բաքվում, Թբիլիսիում ու Երևանում (գները բերված են ըստ 2006 դեկտեմբերի 15-ի տվյալների):

Նյու-Յորք. AT&T ընկերության տրամադրած T1 սիպի գիծ <sup>28</sup>	\$414
Բայու.Ազերոլ Տել <sup>29</sup>	\$5450
Թբիլիսի. Service Ltd <sup>30</sup>	\$6150
Երևան. Արմենտել <sup>31</sup>	\$14000+

Արդյունքում, ըստ ՄԱԿ-ի Միջազգային հեռուստահաղորդագրային միության (ITU) 2005 թ. հաշվետության, Հայաստանը համացանցից օգտվողների քանակով հետ է մնում, օրինակ՝ Աղրբեկանից, չնայած որ համակարգիչների քանակով վերջինից անցնում է:

<sup>28</sup> [http://businessesales.att.com/products\\_services/managedinternetproduct\\_catalogdisplay.jhtml](http://businessesales.att.com/products_services/managedinternetproduct_catalogdisplay.jhtml)

<sup>29</sup> <http://rus.azeurotel.com/tariffs/internet/leased/index.html>

<sup>30</sup> Արժեքը հաշված է 512կբիթ սիմետրիկ գծի արժեքից. <http://www.service.net.ge/en/price.php>

<sup>31</sup> <http://www.armenotel.com/eng/services/internet.htm>

<sup>32</sup> International Telecommunication Union, ICT Statistics Database – Internet indicators: Hosts, Users and Number of PCs, 2005 (<http://www.itu.int/ITU-D/icteye/Indicators>

Երկիր	Համացանց օգտագործողներ		Համակարգիչներ	
	% բնակչության		% բնակչության	
	ընդհ. թիվը	ընդիանուր թիվի համեմատ	ընդհ. թիվը	ընդիանուր թվի համեմատ
Հայաստան	150 000	4.96	200 000	6.61
Ադրբեյջան	678 800	8.07	195 000	2.31
Վրաստան	175 600	3.89	192 000	4.25
Իրան	7 000 000	10.07	7 347 000	10.53
Թուրքիա	16 000 000	21.86	3 703 000	5.13

Սլյուսակ 1. Համացանց օգտագործողների ու համակարգիչների համար Հայաստանում և հարևան երկրներում 2005 թ. դրույթամբ

Փաստորեն, ինտերնետ օգտագործողների՝ բնակչության ընդհանուր թիվի համեմատ տոկոսային հարաբերությամբ Հայաստանն առաջ է ընկել միայն Վրաստանից, ինչը մասամբ կարելի է բացատրել Վրաստանի տնտեսության համեմատաբար ավելի վատ վիճակով<sup>33</sup>:

Հայաստանի ու արտաքին աշխարհի հետ համացանցային կապի ևս մեկ թույլ տեղ է այն, որ հաղորդակցությունը հիմնականում իրականացվում է ընդամենը մեկ (!) օպտիկական մալուկի միջոցով։ Միայն վերջին տարվա ընթացքում (2006 թ.), մի շարք լուրջ վթարների պատճառով, գրեթե ողջ երկիրը օրեր շարունակ մնաց առանց համացանց մուտք գործելու հնարավորության։ Ակնհայտ է, որ ֆորսմաժորային իրավիճակում (օրինակ՝ պատերազմի դեպքում), Հայաստանի թվային

/Indicators.aspx) Մինչ հոդվածը գրվում էր, հայտնի դարձան 2006 թ. Վիճակագրական տվյալները, տես Հավելված 1:

<sup>33</sup> 2005 թ. Հայաստանում GDP per capita-ն \$4800. <https://www.cia.gov/cia/publications/factbook/geos/am.html>, Վրաստանում՝ \$3400. <https://www.cia.gov/cia/publications/factbook/geos/gg.html>

կապն արտաքին աշխարհի հետ հնարավոր է կտրել մեկ հարվածով՝ այդպիսով խափանելով տեղեկատվության արտահանման գրեթե ցանկացած փորձ:

Արմենտելից անկախ, արտաքին աշխարհի հետ կապ ունեն մի քանի մասնավոր ընկերություններ, սակայն դրանց հնարավորությունները սահմանափակ են և օգտագործվում են միայն իրենց ներքին կարիքների համար: Պետք է նաև նշել, որ «Հայաստանի գիտահետազոտական և համակարգչային ցանցերի ասոցիացիա» (Armenian Research Educational Networking Association (ARENA): [www.arena.am](http://www.arena.am)) հիմնադրամը 2001 թվականից սկսած տրամադրում է համացանցային կապ գիտական հաստատություններին ու ԲՈՒՀ-երին: Տվյալ հիմնադրամը գործում է ՆԱՏՕ-ի կողմից հովանավորվող «Վիրտուալ մետախսե խճուղի» (Virtual Silk Highway, [www.silkproject.org](http://www.silkproject.org)) ծրագրի շրջանակներում: ARENA-ն տրամադրում է համացանցային կապ գիտակրթական հաստատություններին անվճար, բայց այդ պայմանները կգործեն մինչև 2008 թվականը: ARENA-ի կապից օգտվում են մոտ քառասուն հաստատություններ, որոնց թվում են Երևանի պետական համալսարանը, Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանը, Հայաստանի գիտությունների ակադեմիան, Ֆիզիկայի ինստիտուտը և այլն:

Փաստորեն, ARENA-ն շրջանցում է ԱրմենՏելի օպտիկական մալուխը և կապ է տրամադրում անմիջապես իր սեփական արբանյակային ալեհավաքով: ARENA-ի կապի արագագործությունը կազմում է 512Kb գեպի գուրս և 2Mb գեպի ներս, այն բաշխվում է հաստատությունների միջև Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամի ([www.nfsat.am](http://www.nfsat.am)) ցանցի և Բայց հասարակության ինստիտուտի կողմից հովանավորվող Գրադարանային ցանցի (The Armenian Automated Union Library Network – AAULN) միջոցով, իսկ մի մասը ստանում է անմիջապես իրենց սեփական ցանցերով:

Հոդվածը գրելու ընթացքում հայտնի դարձավ, որ Արմենտելը գրկել է արտաքին աշխարհի հետ թվային կապի մենաշնորհից, սակայն մոտ մեկ տարի կպահանջվի, մինչև այլ ընկերություններ կկարողանան

մուտք գործել շուկա: Նույնիսկ, եթե համարենք, որ Հայաստանում համացանց օգտագործողների համար «մութ տարիները» վերջացել են, դեռ բավականին ժամանակ կպահանջվի համացանցում հայկական ներկայության զարգացմանը Արմենտեղի հասցրած երկարաժամկետ վնասի հետևանքները վերացնելու համար:

Ինչ վերաբերում է Հայաստանից դուրս գտնվող հայազգի օգտագործողներին, ապա մեզ հայտնի չէ այդ խնդրի շուրջ որևէ հետազոտությունների մասին: Հաշվի առնելով արտերկրում հայության սփովածությունը և ժողովրդագրական հստակ տվյալների բացակայությունը, ինչ պես նաև հայերի կողմից օգտագործվող լեզուների բազմազանությունը, քիչ հավանական ենք համարում նույնիսկ մոտավոր հաշվարկի հնարավորությունը: Զերծ նաև տվյալներ լինելու համարած գործում գտնվող օգտագործողների մասին:

## 2. Հայկական ու հակահայկական ներկայություն

Ինչպես է ներկայացված հայությունը համացանցում: Մեր խորին համոզմամբ, ներկայությունը սահմանափակ է, և այս ուղղությամբ անելիք դեռ շատ կա: Այս պնդումն առավել ևս ճշմարիտ է, եթե հաշվի առնենք համացանցում զգալի հակահայկական ներկայության առկայությունը: Այս հարցին կանդրագառնանք քիչ ավելի ուշ, իսկ այժմ դիտարկենք համացանցային ծառայությունների տարրեր խմբերում հայկական ներկայությունը:

### 2.1. Հայաստանի պետական մարմինների և կազմակերպությունների կայֆեր

Վերջին մեկ-երկու տարիների ընթացքում այս բնագավառում բավականին առաջընթաց է նկատվում: Կայքեր ունեցող պետական կազմակերպությունների թիվն ավելանում է, ավելանում է նաև դրանց տրամադրած օգտակար տեղեկատվությունը: Կայքերի զգալի մի մասը եռա-

լեզու է՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն, թեպետև որոշ դեպքերում օտար լեզուներով տարբերակները թերի են:

Նշենք առկա լուրջ թերությունները: Նախ, հայկական պետական կայքերից և ոչ մեկը լիարժեք չի օգտագործում իրենց արտոնյալ կարգավիճակից բխող հնարավորությունները հայամետ տեղեկատվություն տարածելու համար: Օրինակ՝ ՀՀ կառավարության <sup>34</sup> կայֆի ([www.gov.am](http://www.gov.am)) «Հայաստան. ընդհանուր տեղեկություններ» բաժինը սահմանափակված է ընդհամենը մեկ կարճ էջով, իսկ «Պատմական ակնարկ» բաժինը՝ միայն 1918–2000թթ. Հայաստանի վարչապետների կարճ կենսագրություններով: <sup>35</sup> Ընդ որում՝ ոռուսերեն ու անգլերեն տարբերակնում կենսագրությունների մեծ մասը ընդհանրապես բացակայում է: Այնինչ հարկ է նաև գոնե պատմական համառոտ ակնարկ ներկայացնել Հայաստանի մասին, ինչպես նաև կարեւոր այլ հարցերին, օրինակ՝ Արցախի հիմնախնդրին վերաբերող որոշակի տեղեկատվություն տեղադրել: Նույնը կարելի է ասել նաև Ազգային ժողովի կայֆի ([www.parliament.am](http://www.parliament.am)) մասին: Սոցիալական ապահովության նախարարության կայֆի անգլերեն բաժնի պատմական ակնարկի մեջ չեն հիշատակվում Աղբբեջանից փախստականները <sup>36</sup> (թեև խնդիրը մինչև օրս էլ արդիական է), իսկ ոռուսերեն բաժինը ընդհանրապես չի գործում: ՀՀ Գլխավոր դատախազության կայֆում ([www.genproc.am](http://www.genproc.am)) Աղբբեջանը հիշատակվում է 2–3 անգամ (այն էլ արցախյան հիմնահարցի ենթախորքից դուրս), և սա այն դեպքում, երբ դատախազության արխիվներն այդ թեմայով մեծ քանակությամբ նյութեր են պարունակում (հիմնականում ոռուսերենով), օրինակ՝ տիրահաջակ «Կոլցո» գործողության արդյունքում տուժած քաղաքացիների ցուցմունքները:

<sup>34</sup> [http://www.gov.am/armversion/armenia/about\\_armenia.htm](http://www.gov.am/armversion/armenia/about_armenia.htm)

<sup>35</sup> [http://www.gov.am/armversion/history/historical\\_home.htm](http://www.gov.am/armversion/history/historical_home.htm)

<sup>36</sup> Ministry of Social Security – The Historical Review: [http://www.mss.am/eng/about\\_history.htm](http://www.mss.am/eng/about_history.htm)

Կրթության նախարարության կայքը ([www.edu.am](http://www.edu.am)) հոդվածը գրելու պահին ուղղակի չէր գործում: ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության կայքը ([www.mcyd.am](http://www.mcyd.am)) իրենից ներկայացնում է ընդամենը «Հայտարարություններ» փակցնելու տախտակ» և մշակութային կազմակերպությունների հասցեների տեղեկատու: Մի քանի հազարամյակների ընթացքում ստեղծված հայ մշակութային արժեքներն ուղղակի աննկատ են մնացել կայքի հեղինակների համար: Կայքում շկա գեթ մեկ հայկական հուշարձանի կամ մանրանկարի պատկեր: Նույն նախարարության ենթակայության տակ գտնվող «ՀՀ Պետական Երիտասարդական ֆադաֆականություն» կայքը ([www.youthpolicy.am](http://www.youthpolicy.am)) տիպիկ բյուրոկրատական կառուցյալ է, որը պարունակում է պաշտոնական գեկուցներ, ճառեր, փաստաթղթեր և այլն: Կայքը չի տրամադրում Հայաստանի, հայերի կամ հայ երիտասարդությանը վերաբերող որևէ տեղեկատվություն:

Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնական կայքում ([www.ombuds.am](http://www.ombuds.am)) «պատանդ» բառը հիշատակվում է ընդամենը մեկ անգամ: «Ադրբեջան» բառը՝ նույնպես մեկ անգամ՝ նախիշեանում հայկական խաչքարերի ոչնչացման կապակցությամբ<sup>37</sup>, այն դեպքում, երբ հնարավոր էր բավականին տեղեկատվություն տրամադրել թե՝ նույն խաչքարերի խնդրի, թե՝ մի շարք այլ՝ մարդու իրավունքներին վերաբերող հարցերի, օրինակ՝ փախստականների խնդրի շուրջ:

Անմիջականորեն փախստականների խնդրով զբաղվող ՀՀ կառավարության միգրացիայի և փախստականների վարչության պաշտոնական կայքը ([www.karabagh.am](http://www.karabagh.am)) վերջին անգամ թարմացվել է 2004թ. փետրվարին:

Երևանի ֆադաֆակետարանի կայքը ([www.yerevan.am](http://www.yerevan.am)), բացառությամբ 1879-ից մինչև այսօր քաղաքապետների ցուցակի, երևանի պատմությանը նվիրված գեթ մեկ էջ չունի: Քաղաքապետարանի ենթա-

<sup>37</sup> Պաշտոնական նամակ ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր տնօրեն Կոխտիրո Մացուռային, 12/22/05. <http://www.ombuds.am/main/am/0/16/140/>

կայության տակ (և նույն շենքում) գտնվող երևան քաղաքի պատմության թանգարանը ներկայացված է համացանցում մեկ էջով և մի քանի լուսանկարով<sup>38</sup>:

Համեմատաբար ավելի լավ վիճակում է ԱԳՆ կայքը ([www.armeniaforeignministry.com](http://www.armeniaforeignministry.com)), ինչպես նաև ԱԳՆ ենթակայության տակ գտնվող «Հայաստան-Սփյուռք» կայքը ([www.armeniadiaspora.com](http://www.armeniadiaspora.com)): Թերություններից պետք է նշել ոռուսերեն տարբերակների բացակայությունը: Ընդգծենք, որ ԱԳՆ կառուցվածքը հնարավորություն է տալիս շատ փոքր ծախսերով ստեղծել հայամետ տեղեկատվություն տարածող ու գովազդող կայքերի մի հակա ցանց՝ ստեղծելով արտերկրում Հայաստանի ամեն մի ներկայացուցչության համար առանձին կայքեր: Բանն այն է, որ գեսպանատների ու հյուպատոսությունների կայքերը, ելնելով իրենց կարգավիճակից, միշտ ստանում են բազմաթիվ հղումներ՝ թե՛ միջազգային նշանակության, և թե՛ տվյալ երկրի ներսում գտնվող այլ կայքերից: Յափոք, ԱԳՆ կայքում թվարկված քսանյոթ հայկական դեսպանատներից միայն շորմն ունեն սեփական կայքեր, այն է՝ թելգիայում, Կանադայում, Ռուսաստանում և ԱՄՆ-ում<sup>39</sup>: Ընդ որում՝ Ռուսաստանում Հայաստանի դեսպանատան կայքի առաջարկված տեղեկատվությունն աղքատիկ է և հազվադեպ է թարմացվում:

ԼՂՀ պետական մարմինները ներկայացված են համացանցում հետեւյալ կայքերով.

- ԼՂՀ նախագահ. [www.president.nkr.am](http://www.president.nkr.am) (ունի հայերեն ու ռուսերեն տարբերակներ)
- ԼՂՀ կառավարություն. [www.karabakh.net](http://www.karabakh.net) (հայերեն, անգլերեն, ռուսերեն)
- ԼՂՀ ԱԳՆ. [www.nkr.am](http://www.nkr.am) (հայերեն, անգլերեն, ռուսերեն)
- ԼՂՀ ներկայացույրյունն ԱՄՆ-ում. [www.nkrusa.org](http://www.nkrusa.org) (անգլերեն)

<sup>38</sup> «Երևան քաղաքի պատմության թանգարան». <http://www.yerevan.am/index.php?page=museum>

<sup>39</sup> Armenian Embassies, Consulates and Representations: <http://www.armeniaforeignministry.com/ministry/embassiesList.html>

Պատկերը միանգամայն այլ է, օրինակ՝ թուրքական պետական կայքերում: Թուրքիայի կառավարությանը կից Մամովի և տեղեկատվության վարչության կայքում ([www.byegeg.gov.tr](http://www.byegeg.gov.tr)) միայն անգլերենով «Armenia» բառը հիշատակվում է մոտ 500 էջերում; «Cyprus» բառը՝ 2600, «Karabakh» բառը՝ 100 էջերում; թուրքերեն «ըստու» բառը՝ 3100 էջերում: Ի՞նչարկե, սա հիմնականում մամուլից վերատպումներ են, բայց ի՞նչն է խանգարում նույն տիպի մամուլի տեսություններ ներկայացնել հայկական պետական կայքերից գոյն մի քանիսում:

Թուրքիայի մշակույթի և զբուաշրջության նախարարությունը ([www.kultur.gov.tr](http://www.kultur.gov.tr)) նույնպես ծավալուն տեղեկատվություն ու քարոզչություն է պարունակում, լինի դա հայկական հարցի, Արցախի, թե քրդական դիմագրության մասին: Ավելին, հայկական հարցին վերաբերող նյութերը տրամադրվում են ինչպես թուրքերեն, այնպես էլ անգլերեն, ուսւերեն, ֆրանսերեն, գերմաներեն և մի շարք այլ լեզուներով: Բացի այդ, կայքում զետեղված են նյութեր աղբեջանական մշակութային գործիչների մասին: Թուրքիայի ԱԳՆ կայքը ([www.mfa.gov.tr](http://www.mfa.gov.tr)) ևս պարունակում է հակահունական, հակաբրդական, հակահայկական քարոզչություն<sup>40</sup>:

Հասկանալի է, որ թուրքական մոտեցումը կուրորեն կրկնօրինակելն անհմաստ է և անհեռատես: Մենք կոչ չենք անում լցնել հայկական պետական կազմակերպությունների կայքերը հակաթուրքական կամ հակաաղբեջանական քարոզչությամբ: Կոպիտ ու չմտածված աշխատառք տեղեկատվության տարածման բնագավառում կարող է ավելի շատ վնաս հասցնել քան օգուտ բերել: Սակայն պարտավոր ենք հաշվի նստել այն փաստի հետ, որ թուրքական, աղբեջանական և իրենց աջակցող ու տեղեկատվական դաշտում հակահայկական քաղաքականություն վարող այլ խմբերի ներկայությունը շատ ավելի մեծ է, քան հայկականը ու շարունակում է ընդարձակվել, ունենալով այդ թվում նաև պետական հզոր աջակցություն: Ուստի այս հարցերում առանց պետական

<sup>40</sup> Տես, օրինակ՝ Armenian Allegations բաժինը. <http://www.mfa.gov.tr/MFA/ForeignPolicy/MainIssues/ArmenianAllegations/ArmenianAllegationsmainpage.htm>

ծրագրի և պետության մասնակցության հայկական կողմը դատապարտված է լինելու պարտության:

## 2.2. Գիտակրթական ոլորտ

ՀՀ Գիտությունների Ակադեմիայի կայքում ([www.sci.am](http://www.sci.am)) շգտանք Հայաստանի ու Արցախի վերաբերյալ կամ ընդհանրապես հայագիտական և որևէ արժեքավոր նյութ, բացառությամբ Պատմության ինստիտուտի աշխատող Գայանե Մախմուրյանի ենթակայքում տեղադրված մի շարք հոդվածներից ([research.sci.am/gmakhmourian/](http://research.sci.am/gmakhmourian/)) և Յեղասպանության թանգարանին վերաբերող էջում եղած մի քանի հրապարակումներից, այդ թվում՝ «Հայոց ցեղասպանության պատմության և պատմագիտության հարցեր» պարբերականի որոշ համարների թվային տարբերակներից (<http://www.sci.am/musgen.php>): Շատ կարճ (բառացիորեն մեկ էջի շափով) տեղեկանքներով են ներկայացված Պատմության ինստիտուտը, Հնագիտության և ազգագրության ինստիտուտը և ակադեմիայի այլ հայագիտական կառուցցները: Եվ սա այն դեպքում, եթե թվային տեսքով կարելի էր ներկայացնել տարբեր տարիների հազարավոր աշխատություններ:

Երևանի պետական համալսարանի կայքը ([www.ystu.am](http://www.ystu.am)) վերցերս լիովին վերակառուցվել ու ժամանակակից ձեռվորում է ստացել: Սակայն տեղեկատվական տեսակետից այն բավականին աղքատիկ է: Փաստորեն, կայքում ներկայացված են միայն կարճ տեղեկանքներ ֆակուլտետների և համալսարանի կազմում գործող այլ կառուցների մասին, բայց ծանրակշիռ, ակադեմիական մակարդակի տեղեկատվության պակասն աչք է ծակում: Նույնիսկ ժուռնալիստիկայի ֆակուլտետը ներկայացնող էջում չկա ապագա լրագրողների գրչին պատկանող գեթ մեկ հոդված: Ցանկալի է հնարավորություն տալ անհատ ուսանողներին ու դասախոսներին առանձին ենթակայքեր ունենալու, ինչը թույլ կտա ժամանակի ընթացքում արժեքավոր նյութերի պաշար կուտակել:

Դրական բացառություններից է Երևանի Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի կայքը ([www.brusov.am](http://www.brusov.am)):

Նրանից հնարավոր է ստանալ համալսարանին կից «Լինգվա» հրատարակության վերջին տարիներին հրատարակված գրքերի մի մասի էլեկտրոնային տարբերակները<sup>41</sup>, այդ թվում՝ հայագիտական աշխատանքներ, ինչպես նաև Արցախյան հիմնախնդրի վերաբերյալ նյութեր հայոց ու ռուսաց լեզուներով:

Արցախի պետական համալսարանի կայքը ([www.arsu.nk.am](http://www.arsu.nk.am))՝ հոդվածը գրելու ընթացքում չէր գործում:

Իիստ սահմանափակ թվով նյութեր կան Ազգային գրադարանի կայքում ([www.nla.am](http://www.nla.am)), ինչը ոչ մի պարագայում չի կարելի անվանել բավարար:

Հայաստանի գիտական ու կրթական կազմակերպությունների կայքերի շարքում բովանդակության բարձր մակարդակով աշքի է ընկնում «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի կայքը ([www.noravank.am](http://www.noravank.am)), ուր ներկայացված են բազմաթիվ, հիմնականում վերլուծաբանական բնույթի նյութեր՝ հայերեն, անգլերեն, ռուսերեն :

Օտարերկրյա կրթական հաստատությունների կայքերում հայկական ներկայությունը խիստ սահմանափակ է: Հիշատակման արժանի են ընդամենը երեք կայք. ա. Միջիգան-Դերբորն համալսարանի հայագիտուրյան ամբիոնի կայքը ([www.umd.umich.edu/dept/armenian/](http://www.umd.umich.edu/dept/armenian/)), ուր նյութեր կան անգլերենով՝ հիմնականում ցեղասպանության վերաբերյալ. բ. Կալիֆոռնիայի պետական համալսարանի Ֆրեզնոյի մասնաճյուղի հայագիտուրյան ամբիոնի կայքը ([armenianstudies.csufresno.edu](http://armenianstudies.csufresno.edu)), որը, բացի հոդվածներից ու լուսանկարներից, պարունակում է նաև հայկական մանրանկարների տպագորիչ մի հավաքածու<sup>42</sup>; գ. Երուսաղեմի Եբրայական համալսարանի հայագիտուրյան ամբիոնի կայքը ([micro5.mscc.huji.ac.il/~armenia/](http://micro5.mscc.huji.ac.il/~armenia/)): Օտարերկրյա կրթական հաստատություններում հայկական ներկայության հարցում չի կարելի աշքաթող անել և այն գործոնը, որ արտասահմանի հայագիտական կենտ-

<sup>41</sup> <http://www.brusov.am/publications.asp>

<sup>42</sup> [http://armenianstudies.csufresno.edu/iaa\\_minatures/database.aspx](http://armenianstudies.csufresno.edu/iaa_minatures/database.aspx)

րոններն այս կամ այն ձևով գտնվում են տվյալ երկրում իշխող գաղափարախոսության, քաղաքական ուժերի, ինչպես նաև իշխանամետ գիտական դպրոցների լուրջ ազգեցության տակ, և ոչ միշտ է, որ վարում են անկեղծ հայանապատ գործունեություն<sup>43</sup>:

Արտասահմանյան ուսումնական հաստատությունների կայքերում հայկական ներկայության քննարկումը թերի կլիներ առանց Հայ ուսանողների ընկերակցության (Armenian Student Association – ASA) համակարգի հիշատակման: ԱՄՆ-ում գործող հայկական կազմակերպությունների մեջ սա ամենահներից մեկն է: Նմանատիպ կառուցյներ կան նաև Կանադայում: ASA խմբակ կամ ակումբ կարող է ստեղծվել ցանկացած համալսարանում՝ կամ քոլեջում՝ բավական է այդ ուսումնական հաստատության մի քանի հայ ուսանողներ պատրաստակամություն հայտնեն կազմակերպական մի քանի հարց լուծելու: Այս խմբերի աշխատանքում հաճախ ներգրավված են ինչպես սիյուռքահայ, այնպես էլ Հայաստանից ժամանած ուսանողները, երեմն նույնիսկ օտարազգի ուսանողներ: Համակարգի ամենաերկելի կայքերից են կազմակերպության կենտրոնական կայքը՝ [www.asainc.org](http://www.asainc.org) (ուր տեղադրված են նաև ԱՄՆ Արևելյան ափի մի շարք ASA խմբակների ենթակայքերը, օրինակ Նյու-Յորքի, Բոստոնի և այլն), ինչպես նաև Բերքլիի համալսարանի Հայ ուսանողների միուրյան կայքը ([www.ocf.berkeley.edu/~asa](http://www.ocf.berkeley.edu/~asa)): Հյուսիսամերիկյան ուսումնական հաստատությունները, առանց որևէ խնդրի, իրենց պաշտոնական կայքերում տեղ են տրամադրում նաև ուսանողական կազմակերպություններին: Այդպիսով նշանավոր արևմտյան համալսարանների պաշտոնական կայքերի բարձր հեղինակությունը որոշ

<sup>43</sup> Այս հարցը մանրամասնորեն քննված է պատմաբան ու քաղաքագետ Արմեն Այվազյանի հետևյալ աշխատություններում՝ «Հայաստանի պատմության լուսաբանումը ամերիկյան պատմագրության մեջ: Երևան, 1998» և «Հայագիտությունը որպես ինքնապաշտպանական համակարգ ու դիմադրության անհամաշափ միջոց»: – 21-րդ դար տեղեկատվական-վերլուծական հանդես, № 3, 2005: Ա. Այվազյանի ուսումնասիրություններին կարելի է ծանոթանալ [www.hayq.org](http://www.hayq.org) կայքում:

շափով փոխանցվում է նաև իր ենթակայքերին: Ցավոք, հայ ուսանողական խմբակները բավականին անկայուն կառուցյներ են. այն բանից հետո, երբ գործուն կազմակերպիչներն ավարտում են համալսարանը, խմբերը սովորաբար քայլայվում, խմբերի ենթակայքերն այնուհետև տարիներով չեն թարմացվում կամ ընդհանրապես ջնջվում են: Որպես օրինակ կարող է ծառայել ԱՄՆ ամենահեղինակավոր կրթօջախներից Մասսաշուսեթսի Տեխնոլոգիական հնատիտուտի (MIT) հայ ուսանողական խմբակի ենթակայքը ([web.mit.edu/armenia/www/](http://web.mit.edu/armenia/www/)), որը վերջին անգամ թարմացվել է 2000թ.: Ոչ պակաս հեղինակավոր Ստանֆորդի համալսարանի հայ ուսանողական միության խմբակի ենթակայքը ([asa.stanford.edu/index2.htm](http://asa.stanford.edu/index2.htm)) չի թարմացվել մոտ երկու տարի, ընդ որում՝ այն բաղկացած է արժեքավոր տեղեկատվություն շպարունակող մի քանի էջից: Մինչդեռ այս հանգուցյները կարող էին լինել հայամետ տեղեկատվություն տրամադրող կարևոր կենտրոններ:

Հայ ուսանողների ընկերակցության տեղական կազմակերպությունների կայքերի ստեղծումն ու լիարժեք աշխատանքի կարևորությունն աճում է հյուսիսամերիկյան կրթական համակարգում թուրքական և աղրբեջանական տարեցտարի ավելացող ներկայության հետ զուգահեռ<sup>44</sup>: Հիշենք և Եվրամիության երկրներում գնալով ավելի թափանող թուրքական գործոնը, որը նաև նշանակում է Եվրոպական ուսումնական հաստատություններում թուրքական ներկայության հետպհանական հարդեն ոչ հիմա) գործ ենք ունենալու լավ կրթված, արևմտյան գիտա-

<sup>44</sup> 2005/2006 ուսումնական տարվա ընթացքում թուրքական ուսանողների թիվը կազմել է 11622, ինչը թեև ավելի քիչ է քան 2004/2005-ին, սակայն, այնուամենայնիվ, շատ լուրջ գործոն է, հաշվի առնելով, որ թուրքիան զբաղեցնում է ութերրորդ տեղն ԱՄՆ-ում սովորող ուսանողների թվով: Այսոեղ հաշվի առնված չեն ազգությամբ թուրք, բայց ԱՄՆ քաղաքացիություն ունեցող ուսանողները: Տե՛ս NEW ENROLLMENT OF FOREIGN STUDENTS IN THE U.S. CLIMBS IN 2005/06. Open Doors 2006: International Students in the United States. 2006-11-13. <http://opendoors.iienetwork.org/?p=89251>:

կան դպրոցների ամենաառաջավոր զինանոցին և եվրոպական լեզուներին կատարյալ տիրապետող ու միաժամանակ հայկահայկական տրամադրություններ կրող ու տարածող հազարավոր թուրքերի ու ադրբեջանցիների հետ:

Կիսալրված ու անավարտ է նաև Մուսկվայի Լոմոնտոսովի անվան պետական համալսարանի Հայ ուսանողական ընկերակցության կայքը ([www.asamsu.ru](http://www.asamsu.ru)): Առանձին կայք չունի և Ռուսաստանի հայերի միության (Союз армян России – САР) երիտասարդական թիկը<sup>45</sup>: Ի տարբերություն Ռուսաստանի հայկական երիտասարդական և ուսանողական կազմակերպությունների, Ռուսնետում բավականին գործուն են ադրբեջանական երիտասարդական կազմակերպությունները: Ադրբեջանական երիտասարդության կոորդինացիոն խորհրդի կայքում ([www.ksam.org](http://www.ksam.org)) ու ֆորումում ([birlik.ru/frm/](http://birlik.ru/frm/)) ժամանակին թարմացվում է վերջին նորությունների լրահոսք, անընդհատ տեղադրվում են հայտարարություններ ադրբեջանցի երիտասարդների համար կազմակերպվող միջոցառումների մասին և այլն: Կայքը դիմավորում է այցելուներին «Հայկական ֆաշիզմի» մասին հոդվածով, Խոչալուի «ցեղասպանությանը» նվիրված հոդվածների մրցույթի անցկացման վերաբերյալ հայտարարությունով և հակահայկական այլ նյութերով: Խսկ հիշատակված ֆորումը լի է աշխարհի տարբեր երկրներում նորաստեղծ ադրբեջանական կազմակերպությունների մասին տեղեկատվությամբ<sup>46</sup>:

### 2.2.1 Թուրքիայի ներթափանցումը ԱՊՀ երկրների կրթական ու համացանցային համակարգերի մեջ

Կարենը և խորը ուսումնասիրության կարոտ խնդիր է թուրքական ազգեցության ուժեղացումն ԱՊՀ երկրների կրթական համակարգերում՝ ինչպես Ադրբեջանում ու Միջին Ասիայի երկրներում, այնպես էլ Ռուսաստանում: Ղրղզստանում գործում է «Մանաս» թուրք-ղրղզական համալ-

<sup>45</sup> Դիասպորные организации. <http://www.sarininfo.org/youth.htm>

<sup>46</sup> <http://birlik.ru/frm/index.php?showforum=19>

սարանը, որը գտնվում է թուրքիայի բարձր պետական հովանավորության տակ<sup>47</sup>: Ղրղզա-ռուսական սլավոնական (!) համալսարանում, թուրքիայի դեսպանության միջոցներով, բացվել է թրքագիտական կենտրոն<sup>48</sup>: Թուրքական ազգեցությունից գերծ չի մնացել նաև թուրք-մենստանի կրթական համակարգը<sup>49</sup>:

Անհամեմատ ավելի զգալի է թուրքական ներկայությունը Ղազախստանի գիտակրթական համակարգում: Վերջերս Ղազախստանի ազգային գրադարանին կից բացվեց թուրքական կենտրոն<sup>50</sup>: 2004 թ. տվյալներով, Ղազախստանում գործում էին 15000 ուսանող ունեցող երկու թուրք-ղազախական համալսարան և 5000 աշակերտի սպասարկող 24 թուրք-ղազախական դպրոց: Բացի այդ, թուրքական կողմի աջակցությամբ, 1992–2004 թթ. Թուրքիայի համալսարաններում կրթություն էին ստացել Ղազախստանի 2500 քաղաքացի<sup>51</sup>: Թուրքեստան քաղաքում գտնվող թուրք-ղազախական համալսարանի զարգացման նպատակով թուրքիան 2002 թ. տրամադրեց 24,4 մլն ԱՄՆ դոլար<sup>52</sup>: Այս համալսարաններում առանձնահատուկ ուշադրություն է դարձվում թուր-

<sup>47</sup> Кулов принял участие в совместном заседании Попечительского Совета кыргызско-турецкого университета “Манас”. PBUSSR.ru, 2006-03-17. [http://www.pbussr.ru/index.php?razdel=6&condition=show\\_news&page=1&id=10328](http://www.pbussr.ru/index.php?razdel=6&condition=show_news&page=1&id=10328)

<sup>48</sup> <http://www.krsu.edu.kg/Rus/5FMOCSTyr.htm> Համաձայն կենտրոնի կայքէջին, համալսարանում այժմ աշխատանք է տարվում «Աթաթուրք-օֆիս» կոչվող տեղեկատվական-վերլուծական կենտրոն ստեղծելու համար:

<sup>49</sup> Turkmenistan: Learning the Turkish Way. IWPR RCA № 395, 11-Jul-05. [http://iwrp.net/?apc\\_state=hrufrc255948&l=en&s=f&o=255949](http://iwrp.net/?apc_state=hrufrc255948&l=en&s=f&o=255949)

<sup>50</sup> Церемония открытия Турецкого Центра в Национальной библиотеке Республики Казахстан, Национальная библиотека РК - Пресс-релиз. 2006-12-22. [http://www.nlrk.kz/?modname=news&action=show\\_full&id=565&lang=1](http://www.nlrk.kz/?modname=news&action=show_full&id=565&lang=1)

<sup>51</sup> Казахстан и Турция намерены расширять сотрудничество в сфере образования. Kazakhstan today, 2004-11-06. <http://www.gazeta.kz/art.asp?aid=52147>

<sup>52</sup> Анкара выделит \$24,4 млн. для Казахско-турецкого университета им. Яссави в Туркестане Kazakhstan today, 2002-04-27. <http://www.gazeta.kz/art.asp?aid=14691>

քերենի ու անգլերենի ուսումնասիրության վրա, գործում են տեղեկատվական տեխնոլոգիաների մասնագետների պատրաստման բաժիններ:

Ընդհանրապես անգլերենի խորացված ուսուցումը բնորոշ է նաև Ռուսաստանի տարածքում գտնվող թուրքական դպրոցներին, այն գրավիչ գործոն է՝ հանդիսանում ոչ միայն թուրքալեզու ազգությունների ներկայացուցիչների, այլ նաև ուսուների համար: Այս դպրոցներից ամենաշանավորը՝ 1996 թ. Մոսկվայում բացված անգլերենի և թուրքերենի, ինչպես նաև մաթեմատիկայի ու տեղեկատվական տեխնոլոգիաների խորացված ուսուցմամբ №56 ռուս-թուրքական գլխեցօթիկ դպրոցն է ([www.mischool.ru](http://www.mischool.ru)): Դպրոցի տնօրենն է Գենրիխ Դմիտրիկիչ Կուգնեցովը՝ ժամանակին հեջմ կրթության նախարարի տեղակալ, Կոմիտուսի կենտրոմի գաղափարախոսական բաժնի վարիչ, որը հեջմ վկուզումից հետո նույնպես զբաղեցրել է բարձր պաշտոններ արդեն Մոսկվայի քաղաքապետարանի կրթության գենարատամենտում: Դպրոցի ներկայացուցիչ ներն աշխատուժորեն մասնակցում են Մոսկվայի մշակութային կյանքին, զբաղվում բարեգործությամբ: 2006 թ. «Իզլեստիա» թերթը ընդգրկեց այն Մոսկվայի լավագույն դպրոցների շարքում<sup>53</sup>: Ընդգծենք, որ նույն այդ ժամանակ դպրոցի կայքի հենց առաջին էջում այցելուներին էր առաջարկվում թուրքիայում արտադրված «հայկական կեղծիքների» մասին անվճար լազերային սկավառակ: Երկու թուրքական դպրոց են գործում Մանկո-Պետերբուրգում (որոնցից մեկն է՝ №664 “Лицей восточной культуры” для мальчиков), բազմաթիվ նման հաստատություններ կան նաև Ռուսաստանի այլ քաղաքներում: Ընդսմին, Մոսկվայում պատրաստվում են հիմնելու և մեկ թուրքական դպրոց<sup>54</sup>: Ավելին, սկսած այս տարվանից, Մերձմոսկովյան Սերպուխովյան շրջանի միջնակարգ դպրոցներում մտցվում է թուրքերենի ֆակուլտատիվ ուսուցում<sup>55</sup>:

<sup>53</sup> Лучшие школы Москвы-2006. Известия, 21.03.2006. <http://www.izvestia.ru/education/article3091276/>

<sup>54</sup> <http://www.da.com.tr/platform/RU/index.cfm?no=23>

<sup>55</sup> В школах Серпуховского района будут изучать турецкий язык. Вести – Московская область, 2006-12-21. <http://www.vesti-moscow.ru/rnews.html?id=5702>

**2000–2003 թթ.** Խուսաստանի մի շարք շրջաններում փակվեցին թուրքական հետախուզության նախկին դեկավար Սոնմեզ Քոքսալի տնօրինած «Սուլեյմանցի» կազմակերպության՝ հովանավորության շնորհիվ բացված ուսումնարանները, ինչպես նաև մեկ այլ թուրքական ազգայնական-կրոնական (և «Գորշ գայլերի» հետ կապված) «Նուրջուլար» կազմակերպության հովանու տակ գործող բազմաթիվ մասնավոր դպրոցներ: Համաձայն Խուսաստանի ֆեղերալ անվտանգության ծառայության հաղորդման, «Նուրջուլարը», բացի կրթական-քարոզչական ինսդիրներից, զբացզվում էր նաև հետախուզությամբ: Սակայն շարունակում են ստեղծվել ու զարգանալ այլ (այդ թվում՝ նույն «Նուրջուլարի» հետ կապված) թուրքական կազմակերպությունների կողմից հովանավորվող կրթական հաստատություններ<sup>56</sup>: Խուսաստանի տարբեր քաղաքներում գործող Թուրքիայի հուսատոսությունները, Թուրքիայի բարձրաստիճան պաշտոնյանները, թուրք ձեռներեցներն աշխուժորեն աշակցում են դրանց:

Ծատ ակտիվ է 1996 թվականից գործող «Թուրքանս» հիմնադրամը ([tolerance.org.ru](http://tolerance.org.ru)), որը, որոշ տվյալների համաձայն, հանդիսանում է արդեն հիշատակված «Նուրջուլար» պանթուրքիստական կազմակերպության «դուստր ձեռնարկություններից» մեջը<sup>57</sup>: Այն պաշտոնապես ունի երկու լեզվի ուսուցման կենտրոններ Մոսկվայում և Սանկտ-Պետերբուրգում (վերջինիս կայքն է՝ [www.tolerancepetersburg.spb.ru](http://www.tolerancepetersburg.spb.ru)): Ընդ որում, լրացուցիչ ուսանողներ ներգրավելու նպատակով, բացի թուրքերենից, դասավանդվում են նաև անգլերեն, իտալերեն, իսպաներեն: Հիմնադրամը հրատարակում է նաև «Новые берега» կոչվող ամսագիր: Ոչ պաշտոնական տվյալներով, հենց այս կազմակերպությունն է հանդիսանում

<sup>56</sup> Яна Амелина, «Пятая колонна» в гражданско камуфляже». ИА «Росбалт», 2003-11-23. <http://www.rosbalt.ru/2003/11/23/130929.html>

<sup>57</sup> Նույն տեղում, ինչպես նաև Մуфтիй протестует против турецких "обучений", 2001-04-24. [http://www.kavkazweb.net/news/news.cgi?action=view&nid=01&yy=2001&mm=4&dd=23&message\\_id=98808209520107wkclNKuwp5iOYjn](http://www.kavkazweb.net/news/news.cgi?action=view&nid=01&yy=2001&mm=4&dd=23&message_id=98808209520107wkclNKuwp5iOYjn)

վերը հիշատակված Մոսկվայի №56 գիշերօթիկ դպրոցի հիմնադիրն ու իրական հովանավորողը<sup>58</sup>:

Թուրքերը հետևողականորեն մուտք են գործում ոչ-թուրքալեզու ԱՊՀ երկրների բարձրագույն կրթության համակարգ: Նույն «Թուրքանսի» աջակցությամբ թուրքական գիտակրթական կենտրոններ են հիմնադրվել, օրինակ՝ Ռուսաստանի պետական հումանիտար համալսարանում՝ 2002 թ. (կենտրոնի աշխատողների կողմից հրատարակվել են մի շարք գրքեր, այդ թվում՝ ոռուսերեն է թարգմանվել Մուսթաֆա Քեմալի ստեղծագործությունների ժողովածուն՝ տե՛ս [www.rggu.ru/section-html?id=278](http://www.rggu.ru/section-html?id=278)), Նիմնի Նովգորոդի պետական լեզվաբանական համալսարանում՝ 2001 թ. ([www.lunin.sci-nnov.ru/?id=430](http://www.lunin.sci-nnov.ru/?id=430)), Կոստրոմայի պետական աեկանմանության կազմակերպությունների ժողովածուն՝ տե՛ս [www.turkcenter.ru](http://www.turkcenter.ru), կենտրոնը նաև հրատարակում է «Բուֆոր» անունով ամսագիր), Աստրախանի պետական համալսարանում՝ նույնպես 2006 թ.<sup>60</sup>, Ուկրաինայում՝ Խերսոնի պետական համալսարանին կից<sup>61</sup>: 2006 թ. գեկտեմբերին թուրքական կենտրոններ են բացվել Բելոռուսական պետական համալսարանում՝ 2002թ.՝ Մինսկի պետական լեզվաբանական համալսարանում: Ի դեպ, թուրքերնի դասերի են հաճախում Բելոռուսիայի կառավարման համալսարանի մի խումբ ուսանողներ: Թուրքերենի դասեր են մտցվել նաև Մինսկի չորս դպրոցներում<sup>63</sup>:

<sup>58</sup> Светлана МЕТЕЛЁВА. «Аллах с нами. Расследование МК: турецкая исламская секта успешно осваивает Россию», 2002-12-06. <http://www.mk.ru/numbers/102/article3273.htm>

<sup>59</sup> Международная деятельность КГТУ. <http://www.kstu.edu.ru/official/kontakts.asp>

<sup>60</sup> <http://www.aspu.ru/?mid=19&idnews=52>

<sup>61</sup> <http://www.university.kherson.ua/Default.aspx?tabindex=1&tabid=2&lng=2&Inbox=405>

<sup>62</sup> Центр турецкого языка и культуры открылся в БГУ. Вечерний Минск, 15 декабря 2006 г. [http://newsvm.com/articles/2006/12/15/tureck\\_centre.html](http://newsvm.com/articles/2006/12/15/tureck_centre.html)

<sup>63</sup> Центр турецкого языка и культуры. <http://mslu.by/studycenters/tr/>

Վրաստանում 1995 թվականից ի վեր գործում է թուրքական «Սևծովյան միջազգային համալսարան» ([www.ibsu.edu.ge](http://www.ibsu.edu.ge)):

Թուրքիայի դեսպանության, «Թուրքան» հիմնադրամի ու մի շարք ոռոսաստանյան կրթական հաստատությունների աջակցությամբ Մոսկվայում անց են կացվում թուրքերենի օլիմպիադաներ՝<sup>64</sup>:

Ըստհանրապես, վերջին տարիներին առանձնապես ոռոսական երիտասարդության շրջանում խիստ ժողովրդականություն է վայելում թուրքական մշակույթի, թուրքերենի ուսումնասիրությունը: Դրեթե բոլոր խոշոր քաղաքներում գործում են նաև թուրքերենի ուսուցման դասընթացներ, ինչպես անվճար, այնպես էլ մասնավոր վճարովի, ուր դասավանդում են թուրքիայից ժամանած դասախոսներ: Այդպիսիներից է, օրինակ՝ Թուրքական մշակույթի և լեզվի մասնավոր կենտրոնը ոռոսական *Sovmuk* քաղաքում ([turkish.city.tomsk.net](http://turkish.city.tomsk.net)) – կայքում տեղադրված են նաև քարոզչական նյութեր, օրինակ՝ քրդական հարցի վերաբերյալ, թուրքերենի հեռակա ուսուցման դպրոցի կայքը՝ [www.turkce-ogrenelim.com](http://www.turkce-ogrenelim.com): Նույն դպրոցը [LiveJournal.com](http://LiveJournal.com) համացանցային օրագրերի վերոհիշյալ կայքում վարում է թուրքերենի [ru\\_turkce.yandex.ru](http://ru_turkce.yandex.ru) (community.livejournal.com/ru\_turkce/):

Ակնհայտ է, որ թուրքիայի այսպիսի բուռն «լուսավորչական գործունեությունն» ուղղված է ԱՊՀ երկրներում իր դիրքերի ամրապնդմանն ու քարոզչության տարածմանը: Այսպես ուղղակի անբացատրելի է, թե ինչու է թուրքիան ԱՊՀ երկրների բնակչությանը «կրթելու» համար տասնյակ միլիոնավոր դոլարներ ծախսում, եթե լուրջ խնդիրներ կան հենց թուրքիայում բնակչությանը կրթելու հարցում: Այսպես՝ Միացյալ Ազգերի Կազմակերպության մանկական ֆոնդի (UNICEF) տվյալների համաձայն, արևելյան թուրքիայում տղամարդկանց 15 և կանանց 39 տոկոսը երբեք դպրոց չեն հաճախել՝<sup>65</sup>:

<sup>64</sup> Студенческие работы. <http://www.rggu.ru/section.html?id=1678>

Итоги Всероссийской Олимпиады по турецкому языку, 2006-04-08.

<http://www.rsuh.ru/print.html?id=50444>

<sup>65</sup> Say Yes, Autumn 2005: Everyone Needs a Quality Education. <http://www.unicef.org/turkey/sy16/ge67.html>

Թուրքերի գործունեությունն ապարդյուն չի անցնում. հիմնվելով մեր անձնական դիտարկումների վրա, կարող ենք պնդել, որ վերջին մեկ-երկու տարվա ընթացքում Ռունետում կտրուկ ավելացել են ազգությամբ ոչ թուրք և ոչ ադրբեջանցի թուրքամետ տրամադրություններ կրողների քանակը, և, ամեախ ազգությունից ու մասնագիտությունից, հաճախ բավական է մի քանի նախադասություն փոխանակել, որպեսզի պարզ դառնա զրուցակցի՝ թուրքական դպրոցի կամ համալսարանի սան կամ շրջանավարտ լինելը: Թուրքական ուսումնական հաստատություններով անցած մարդիկ աշքի են ընկնում գոկտրինացման աստիճանի հասցած պանթուրքիստական տրամադրություններով: Զենք կասկածում, որ համացանցային օգտագործողների այս խավի քանակական աճը շատ շուտով հանգեցնելու է բազմաթիվ թուրքամետ (այդ թվում և հակահայկական) կայքերի առաջացմանը:

Միաժամանակ, Մոսկվայում գործում է չորս «հայկական» դպրոց, որոնք միայն վերապահումներով կարելի է այդպիսին համարել (մի քանիսում նույնիսկ հայոց լեզվի կանոնավոր դասեր չկան), այդ թվում՝ այսպես կոչված «հայկական էթնոբազարամասով» №1110 միջնակարգ դպրոցը ([armschool-1110.narod.ru](http://armschool-1110.narod.ru)); №1650 «Առաջին բազմամշակության դպրոցը» ([www.schoolofelia.com](http://www.schoolofelia.com)); հայկական գիմնազիան (համացանցում ներկայացված չէ): Այս հաստատությունները գրեթե բոլորովին ներգրավված չեն քաղաքական-քարոզչական հայամետ աշխատանքների մեջ և որևէ առումով չեն կարող մրցել Թուրքիայի պետական ազակցությունը վայելող թուրքական դպրոցների ու կրթական կենտրոնների համակարգի ազգեցության հետ:

Գիտակրթական քողի տակ աշխատող թուրքական կազմակերպություններից հիշատակենք ԱՊՀ երկրների տարածքում աշխատանքների գործող թուրքական Երկխոսություն-Եվրասիա (Diyalog Avrasya) հասարակական կազմակերպությունը ([www.da.com.tr/platform/RU/default.cfm](http://www.da.com.tr/platform/RU/default.cfm)), որն իր աշխատանքի մեջ է ներգրավում տարբեր երկրների քարձրատիճան պաշտոնյաների, ԱՊՀ երկրների ու Թուրքիայի գիտակրթական կազմակերպությունների ներկայացուցիչների, պրոֆեսորների, գիտնա-

կանների, զբաղվում է հրատարակական գործունեությամբ, կազմակերպում է հանդիպումներ և զանազան միջոցառումներ: Կազմակերպության տեղական կոմիտեներ են ստեղծված Խուսաստանում, Աղբքեցանում, Վրաստանում, Մոլդովայում, Ուկրաինայում, Միջին Ասիայում: Խուսական կոմիտեի նախագահն է Խուսաստանի ԳԱ. Արևելագիտության ինստիտուտի տնօրեն Խոստիլավ Թիբակովը, վրացականինը՝ Վրաստանի ԳԱ. նախագահ Թամազ Գամկրելիձեն:

Հականակական գործունեությամբ աշքի է ընկնում նաև «Եվրասիական ռազմավարական հետազոտությունների կենտրոն» (Avrasya Stratejik Araştırmalar Merkezi – ASAM, կայքը՝ [www.asam.org.tr](http://www.asam.org.tr)) կազմակերպությունը: Այս հաստատության ենթակայության տակ է գտնվում հայկական հարցում մասնագիտացող «Հայկական հետազոտությունների ինսափառությունը» (Ermeni Araştırmaları Enstitüsü – ErArEn, կայքը՝ [www.eraren.org](http://www.eraren.org)): Վեշինս պատմաքաղաքական հետազոտությունների քողի տակ զբաղվում է հականակական քարոզությամբ, որն, իհարկե, զարմանալի չէ: Կայքն անգլերեն ու թուրքերեն լեզուներով է, բայց անգլերեն տարբերակը խիստ թերի է: Համացանցում վերջերս հայտնվել է թուրքական նմանատիպ ևս մի կազմակերպության՝ «Միջազգային հարաբերությունների և ռազմավարական վերլուծությունների քուրֆական կենտրոն»-ի կայքը (Türkiye Uluslararası İlişkiler ve Stratejik Analizler Merkezi – TÜRKSAM կայք՝ [www.turksam.org](http://www.turksam.org)): Կայքը եռալեզու է՝ թուրքերեն, ուսւերեն, անգլերեն, նշված չեն կազմակերպության հասցեն կամ հեռախոսի համարները: Խուսերեն տարբերակի առաջին իսկ է զում, բացի այլ թեմաներով հոդվածներից, հղումներ են տեղադրված այսպիսի վերնագրերով նյութերի վրա՝ «Հայերը սպանել են կես միլիոն թուրք – 24 ապրիլի, 2005» («Արմյան սբիլուստ տորոկ - 24 Ապրеля 2005»), «Ատելությունը հայերի էության մեջ է: Այն անսահման է:» («Ненависть Заложена В Природе Армян. Она Беспредельна»), «Հայաստանի կեղծ քարոզությունը ցեղասպանության մասին» («Ложная Пропаганда Армении О Геноциде»): Առանձին մի մեծ բաժին է հատկացվում Մեծամորի միջուկային էլեկտրակայանին, որն այցելուներին դի-

մավորում է գանգերի ու ճառագայթման նշանների պատկերներով ու թուրքիայի համար հայկական էլեկտրակայանի մահացու վտանգի մասին հոդվածներով<sup>66</sup>: Հաջողվեց սակայն պարզել, որ սույն խորհրդավոր կայքը գրանցված է ASAM-ի Ռուսաստանի գծով մասնագետ Սինան Օ-գանի անունով, իսկ գրանցման հասցեն նույն այն շենքի հասցեն է, ուր գտնվում էն ASAM ու ErArEn կազմակերպությունները, ավելին՝ գրանցողի հեռախոսի համարը տարբերվում է ASAM-ի ֆաքսի համարից ընդգամենը վերջին նիշով: Այսպիսով կարելի է ենթադրել, որ ավելի լայն լսարան գրավելու համար այս կազմակերպությունները ստեղծել են ևս մեկ հարթակ, որի հետ իրենց կապը գերադասում են չբացահայտել:

Մեկ այլ թուրքական «հետազոտական» հաստատություն է այսպես կոչված «Միջազգային ռազմավարական ուսումնասիրությունների կազմակերպությունը» (International Strategic Research Organization – ISRA, [www.usak.org.uk](http://www.usak.org.uk)). Սա բավականին հզոր կառույց է, որի կազմում աշխատում են մի քանի տասնյակ պատմաբաններ, քաղաքագետներ, տնտեսագետներ և այլն: Այն հրատարակում է Journal of Turkish Weekly ([www.turkishweekly.net](http://www.turkishweekly.net)) և Ankara Post ([www.ankarapost.net](http://www.ankarapost.net)) պարբերականները, երկու գիտական ամսագրեր, ինչպես նաև գրքեր: Կազմակերպության պատվավոր նախագահն է Թուրքիայի նախկին պետնախարար Թայիր Գուլերը: Զնայած, որ կազմակերպությունն ինքն իրեն գովազդում է որպես անաշառ ու գիտական, նրա քարոզական արտադրանքը (համենայն դեպս՝ հայկական թեմայով) բավականին պրիմիտիվ է: Որպես օրինակ առաջարկում ենք ծանոթանալ կազմակերպության տնօրեն Սեդաթ Լաշիների «Մանկական պոռնոգրաֆիան և հայկական հարցը նիդեռլանդական քաղաքական [դաշտում]» («Child Pornography and Armenian Issue in the Netherlands Politics») մի հոդվածի, որով բավականին հաջող բնութագրվում է կազմակերպության քաղաքականությունը

<sup>66</sup> <http://www.turksam.org/metsamor/metsamor.asp>

հայկական հարցում<sup>67</sup>: Եվս մեկ հետաքրքիր փաստ՝ կազմակերպությունն օգտագործում է արդեն հիշատակված Wikipedia հանրագիտարանն իր կայքերը գովազգելու համար, և անցած տարվա ընթացքում Լաշիներն անձամբ մի քանի անգամ մասնակցեց Wikipedia-ում հոդվածներ գրելուն, այդ թվում և հայկական հարցին վերաբերող<sup>68</sup>:

Թուրքական հետազոտական կենտրոններից ամենալուրջն է Թուրքիայի արտգործնախարարության Ռազմավարական ուսմնասիրությունների կենտրոնը ([www.sam.gov.tr](http://www.sam.gov.tr)): Այս կազմակերպությունը բազմաթիվ նյութեր է հրապարակում, այդ թվում և հայկական հարցի վերաբերյալ: Կենտրոնի «արտադրանքը» շատ ավելի բարձրորակ է, քարոզչությունն ավելի նուրբ է, անմիջապես աշք չի ծակում: Հրատարակված նյութերի մեծ մասը տեղադրված է կազմակերպության կայքում:

### 2.3. Հայք ֆորումներում և բլոգոսֆերայում<sup>69</sup>

#### 2.3.1. Ֆորումներ

Համացանցային հայկական (ինչպես նաև աղրբեջանական ու թուրքական) համայնքները հիմնականում ներկայացված են համացանցային բանավիճային ակումբներով՝ ֆորումներով, որտեղ և վերջին մի քանի տարիներին տեղի էր ունենում հայ-աղրբեջանական և հայ-թուրքական շփումը: Այս պայմաններում կողմերի միջև ցանկացած հարցի քննարկում շատ արագ վերածվում է թեժ բանավեճերի և բախումների: Յուրօրինակ «մարտադաշտեր» էին ինչպես «թշնամու» (Հակառակ կողմի), այնպես էլ չեղոք (ոռւսական, հրեական, ամերիկյան և այլ) ֆորումները,

<sup>67</sup> Sedat LACINER, Child Pornography and Armenian Issue in the Netherlands Politics. <http://www.usak.org.tr/junction.asp?mod=articles&st=PrintArticleDetail&id=211&lm=58649JLFD0932&ln=EN>

<sup>68</sup> User contributions (Slaciner): <http://en.wikipedia.org/w/index.php?title=Special:Contributions&limit=500&target=Slaciner>

<sup>69</sup> Այսուղեա հետագայում «Հայք» բառն օգտագործվում է որպես Հայաստանը (բառի ամենալայն իմաստով), Սկյուռքը և ողջ հայությունն ամփոփող հասկացություն:

ուր քննարկման առարկա էին Հայաստանի, Արցախի, Ադրբեջանի, Թուրքիայի, ցեղասպանության և այլ թեմաներ: Երկու կողմից էլ գործում էին մի քանի տասնյակ մարդուց կազմված խմբեր, որոնցից ամեն մեկը փորձում էր ակցիաներ իրագործել համացանցային տեղեկատվական «Ճակատում»: Այս խմբերը ժամանակի ընթացքում ստեղծել և օգտվում էին բավականին լուրջ տեղեկատվական պահոցներից, մշակել էին իրար դեմ տեղեկատվական դաշտում պայքարի եղանակներ ու մեթոդներ: Հայկական և ադրբեջանական մի քանի ֆորումներում նույնիսկ բացվեցին հատուկ բաժիններ՝ նվիրված հենց ազգամիջյան խնդիրների, արցախյան հակամարտության քննարկումներին:

Հայ-ադրբեջանական/թուրքական երկխոսությունների մասնակիցներին կարելի է պայմանականորեն դասել հետևյալ խորհրդանշական խմբերի:

1. Լուրջ փորձագետներ և վերլուծաբաններ. չնայած, որ հիմնականում նրանք օգտագործում են ծածկանուններ՝ ներկայացրած նյութերից կարելի է կուա՞ճել, որ դրանց տակ թաքնվում են լրագրողներ, փորձագետներ և այլ մասնագետներ: Օրինակ՝ Day.az տեղեկատվական կայքի ֆորումում «Հեքո» ծածկանունով հանդես է գալիս Ադրբեջանի Միլի մեջլիսի պատգամավոր Անար Մամեդխանովը, որը միաժամանակ այդ կայքի տերն է: Հայկական Portal.am կայքի ֆորումում «Բակինեց» ծածկանունով գործուն կերպով մասնակցում է ադրբեջանցի լրագրող Ալեքպեր Ալիկը, որը հաճախ լինում է Հայաստանում: Analitika.az կայքի ֆորումի հիմնական մասնակիցներն ադրբեջանցի լրագրողներ են՝ Շահին Ռազայկը, Քենան Գուլուզադեն, Ազեր Ռաշիդովը, Բոյուկաղա Աղակը և այլն:

2. Ազգայնականներ. այս խմբի ներկայացուցիչները մի կողմից փորձում են դրական ներկայացնել սեփական երկիրը և ազգը, մյուս կողմից՝ հարվածել հակառակորդի թույլ տեղերին: Նման մոտեցում է դրամորվում ինչպես թերահավատ հայրենա-

կիցների, այնպես էլ հակառակ կողմի շկողմնորոշված ներկայացուցիչների նկատմամբ:

3. Աշխարհագաղաքացիներ (կոսմոպոլիտներ). այս տիպի մասնակիցները ձգտում են հասկանալ հակառակ կողմին, ներկայացնել սեփական ազգի դրական կողմերը և զարգացնել լիարժեք երկխոսություն: Հարկ է նշել, որ ընդհարվելով հակառակ կողմից երկխոսության գնալու ցանկության բացակայության, սադրանքների, երկակի ստանդարտների ու սարոտաժի հետ՝ շատ հաճախ այս մասնակիցները վերանայում են իրենց դիրքերը հօգուտ առավել ազգայնականի: Սակայն, ընդհանուր մթնոլորտի հանդարտվելու դեպքում որոշ ժամանակ անց հիմնականում վերադառնում են իրենց բնորոշ վիճակին:

4. Ակնհայտ խովիգաններ, որոնք միայն զբաղվում են հակառակ կողմին հայհոյելով, սադրանքներ կազմակերպելով:

Հետաքրքիր է, որ աղբրեջանական լրագրողներից և փորձագետներից ոմանք օգտվում էին ֆորումային քննարկումների նյութերից: Հաճախ այդ քննարկումների և նույն օրերին աղբրեջանական մամուլում տպագրվող նյութերի միջև կարելի է ակնհայտ կապ նկատել:

Բերենք մի օրինակ: OpenArmenia.com ֆորումում 2005 թ. օգոստոսին անցկացվեց հարցազրուց-հանդիպում փիլիսոփա Կարեն Սվասյանի հետ: Մեկ շաբաթ անց հայտնի աղբրեջանցի լրագրող նուրանին «Էխո» թերթում հրատարակեց հոդված, որը հիմնված էր համացանցային այս հարցազրուցի վրա<sup>70</sup>:

Սակայն 2006 թ. ընթացքում հայ-աղբրեջանական երկխոսության աշխուժությունը համարյա թե մարել էր: Պատճառում հետևյալն են. ա) անցած տարիների ընթացքում կողմերն արդեն հասցրել են անթիվ անգամներ ներկայացնել իրենց մոտեցումները, կարծիքները և ասելիք պարզապես չի մնացել. բ) մասնակիցների ազատական-աշխարհաքաղաքացի մասը հիասթափված է, քանի որ երկխոսություն չի ստացվում, և հայ

<sup>70</sup> Հորանի, “Синдром консервной банки”. Эхо, № 151(1140), 10 Августа 2005

ու աղրբեջանական հասարակությունների գիրքերը գնալով իրարից հեռանում են. դ) ֆորումային ընդհարումներն այնքան են թեժանում, հակառակ կողմի ներկայացուցիչների վրա ճնշումն այնքան է ուժեղանում, որ հակառակորդի հարթակներում ներկա լինելն ու լիարժեք բանավիճելը բարդանում է, իսկ շատ ժամանակ՝ դառնում անհնարին:

Ամենաբազմամարդ հայկական ֆորումներն են [OpenArmenia.com](http://OpenArmenia.com) ([forum.openarmenia.com](http://forum.openarmenia.com)) և [Hayastan.com](http://Hayastan.com) ([forum.hayastan.com](http://forum.hayastan.com)), ուր ներկայացված է ինչպես Հայաստանը, այնպես էլ ԱՊՀ երկրների հայությունը, [Haylife.ru](http://Haylife.ru) ([forum.haylife.ru](http://forum.haylife.ru)) և [Yerevan.ru](http://Yerevan.ru) ([forum.yerevan.ru](http://forum.yerevan.ru)), որտեղ հիմնական այցելուներն են Խոսաստանի և Ուկրաինայի հայերը, հիմնականում հայաստանցի այցելուներ ունեցող ArmKB.com ([forum.armkb.com](http://forum.armkb.com)) կայքը: Հայրենասիրական դիրքեր ունեցող Artsakh.info-ն ([artsakh.info/forum](http://artsakh.info/forum)) հանդիսանում է [Artsakhworld.com](http://Artsakhworld.com) և [Genocide.ru](http://Genocide.ru) կայքերի միացյալ ֆորում: Հայալեզու ֆորումներից նշենք Dar Club ([www.akumb.am](http://www.akumb.am)) և նորաբաց, բայց խոստումնալից [Zhamanc.am](http://Zhamanc.am) ([forum.zhamanc.am](http://forum.zhamanc.am)) ֆորումները: Անգլալեզու ամենամեծ ֆորումն է [Hyeforum-ը](http://Hyeforum.ru) ([hyeforum.com](http://hyeforum.com)): Գործող հայկական ֆորումների՝ այդ թվում տարբեր երկրներում հայկական համայնքների ֆորումների մի մեծ ցուցակ կա [ArmenianForums.com](http://ArmenianForums.com) կայքում:

Աղրբեջանական ֆորումներից խոշորագույններն են [Day.az](http://Day.az) (<http://day.az/forum>) և [Bakililar.az](http://Bakililar.az) ([forum.bakililar.az](http://forum.bakililar.az)), փակված և վերջերս նորից վերաբացված «Реальный Азербайджан» ամսագրի ֆորումը տեղափոխվել է [Atc.az](http://Atc.az) կայքի վրա (<http://atc.az/forum>) վրա: Վերջերս բացված վերլուծական [Analitika.az](http://Analitika.az) կայքում գործող ֆորումում ([analitika.az/forums](http://analitika.az/forums)) աշխատված են աղրբեջանցի լրագրողները: Տվյալ ֆորումի աղմինխատրատորներից մեկն է Պատերազմի և խաղաղության լուսաբանման ինստիտուտի (Institute for War and Peace Reporting – IWPR) Բաքվի գրասենյակի ղեկավար Շահին Խոջակը: Խոսաստանի աղրբեջանցիները ներկայացված են մասնավոր [Azeri.ru](http://Azeri.ru) կայքի ֆորումով ([azeri.ru/Forum/](http://azeri.ru/Forum/)) և «Աղրբեջանական երիտասարդության կոորդինացիոն խորհուրդ» կազմակեր-

պության կայքի<sup>71</sup> ֆորումով ([www.birlik.ru/frm/](http://www.birlik.ru/frm/)): Հարկ է նշել, որ ադրբեցանական ֆորումները շատ ավելի բազմամարդ են, քան համապատասխան մակարդակների հայկական ֆորումները:

### 2.3.2. Հականայկական գործունեությունը չեղոյն երկրների ֆորումներում

Ադրբեջանցիներն ու թուրքերը բավականին աշխուզժ են գործում այլազգիների ֆորումներում: Ադրբեջանցիներն ակտիվ են թե՛ ոռու ազգայնականների, թե՛ ոռուսախոս հրեաների, թե՛ ընդհանուր թեմատիկայի, ինչպես նաև վրացական և ԱՊՀ այլ երկրների ֆորումներում: Հակահայկական քարոզության տարածման գործում թուրքերն ավելի շատ «մասնագիտանում» են ամերիկյան, եվրոպական, իսրայելական ֆորումներում: Նրանք հակահայկական աշխատանք են տանում նույնիսկ սպիտակ ռասիստների տիրահանչական [Stormfront.org](http://Stormfront.org) և մի շարք այլ ռասիստական/նեռնացիստական կայքերում, փորձելով համոզել, որ հայերը «արիական ազգ» չեն, սեմիտական արյուն ունեն և «սպիտակ ռասայի դավաճաններ են»: Միաժամանակ հրեական ֆորումներում փորձում են հայերին ներկայացել որպես ռասիստներ, հակասեմականներ, Հիտլերի աջակիցներ և այլն: Նման մարտավարություն են որդեգրել նաև ադրբեջանցիները՝ ոռուսական և այլ ազգերի ազգայնականների ֆորումներում, որտեղ ստեղծում են հայի բացասական կերպարը՝ ելնելով տվյալ ազգի պատկերացումներից: Ոուս ֆաշիստների ֆորումներում հայերին փորձում են ներկայացնել որպես հրեաների մեծ բարեկամների, տարածում են կեղծիքներ Հայաստանում ապրող սլավոններին հետապնդելու մասին և այլն: Մյուս կողմից, հրեական ֆորումներում հայերը ներկայացվում են որպես հակասեմականներ, տարածվում են ադրբեջանական քարոզության կեղծիքները «հայերի կազմակերպած Ադրբեջանի հրեաների շարդերի» մասին: Վրացական ֆորումներում փորձեր են ար-

<sup>71</sup> Կազմակերպության կայքը գտնվում է առանձին հանգույցում՝ [www.ksam.org](http://www.ksam.org) հասցեով:

վում Զավախիքի հարցը սրելով՝ ուժեղացնել վրացի մասնակիցների մոտ առանց այն էլ առկա հակահայկական տրամադրությունները:

Բացի ազրբեջանցիներից, խիստ հակահայկական տրամադրությունները նկատվում ու գնալով ուժգնանում են ոռուսական ծայրահեղ ազգայնականների շրջանակներում, որ պարզ երևում է նրանց ֆորումներում։ Այսպես, պարբերաբար (սովորաբար կապված Ռուսաստանում հերթական հայ երիտասարդի սպանության հետ, բայց նաև այլ պատճառներով) ոռու ծայրահեղականները համացանցում սկսում են հակահայկական հիստերիա, որն ալիքաձև տարածվում է տասնյակ և հարյուրյավոր արդեն ոչ ծայրահեղական կայքերով։ Հակահայկական գործողությունները ոռու ազգայնականների կողմից հաճախակի են դարձել նամանավանդ վերջին երկու տարիների ընթացքում։ Բացի ակնհայտ ֆաշիստական ու ծայրահեղական կայքերից, որտեղ տեղադրվում է օրենքին ակնհայտորեն հակասող տեղեկատվություն, աշքի են ընկնում և մի շարք «օրենքի սահմաններում գործող» նորաթուխ կազմակերպություններ։ Դրանցից տվյալ պահին ամենաաշխուզն է Ապօրինի իմիգրացիայի դեմ շարժումը (Движение против нелегальной иммиграции, ДПНИ)։ Տվյալ պահին այս կազմակերպության կայքը ([dprn.org](http://dprn.org)) հակահայկական տեղեկատվության տարածման հիմնական աղբյուրներից է։

Կազմակերպությունը ստեղծվել է 2002 թ. մերձմոսկովյան Կոստանուարմեյսկ քաղաքում հայկական շարդից հետո։ Կազմակերպության ղեկավարն է ոմն Ալեքսանդր Պոտկինը, որը սակայն հանդես է գալիս Ալեքսանդր Բելով կեղծանուով։ Պոտկինը ժամանակին ոռու ծայրահեղական «Պայմատ» կազմակերպության մամուլի քարտուղարն է<sup>72</sup>։

ԴՊНИ ցանցային տիպի կազմակերպություն է, իբր ներկայիս իշխանություններին ընդդիմադիր։ Խուսաստանի շրջաններում նրա տեղական մասնաճյուղերը գործում են իրարից գրեթե անկախ, ինչը կազմակերպությանը լրացուցիչ ճկունություն է տալիս։ «Հակախմիգրանտները» վարում

<sup>72</sup> «ԴՊНИ - реинкарнация "Памяти"? Информационно-аналитический центр "Со-ва". 2005-11-07. <http://xeno.sova-center.ru/29481C8/6560D87>

Են ընդհանրապես «Հակակովկասյան» քաղաքականություն (օրինակ՝ բողոքում են ընդդեմ Հեյդար Ալիևին Մոսկվայում հուշարձանի տեղադրման, հակավրացական ալիքը բարձրանալուց հետո սկսեցին կոչ անել իրենց անդամներին ոստիկանություն հաղորդել վրացիների հավաքատեղիների մասին՝ ակումբների, սրճարանների և այլն), սակայն կարծես թե առանձնահատուկ «սեր» են տածում հենց հայերի նկատմամբ: Տեղեկություններ կան Ծուսաստանի հարավում ՃՊԻ և կազակների մերձեցման մասին<sup>73</sup>: ՃՊԻ բաժանմունքներ են գործում նաև Ուկրաինայում (մասնավորապես Սևաստոպոլում), Բելառուսում (կայքը՝ [www.bdpni.org](http://www.bdpni.org) տվյալ պահին չի գործում): Վերլուծաբաններից շատերը նշում են ՃՊԻ բարձր կարգապահությունը, որակյալ աշխատանքը տեղեկատվական դաշտում: Նաև լուրջ մտահոգություններ կան, որ ՃՊԻ իրականում Ծուսաստանի պետականությունը խարիսկելու նպատակ ունի<sup>74</sup>:

Կազմակերպությունը շատ արդյունավետ օգտագործում է ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները, այդ թվում՝ համացանցը (տե՛ս արդեն նշված «Ծուսական երթի» վերաբերյալ հատվածը սույն հոդվածի 218-րդ էջում): Կազմակերպության շրջանային մասնաճյուղերն ունեն առանձին կայքեր ու ֆորումներ, որ նպաստում է կազմակերպության համացանցային ընդհանուր ներկայության ընդլայնմանն ու գովազդին: Օրինակ՝ ինքնուրուցն կայքեր ունեն Սերգիև-Պոսադի ([www.dpni-sp.org](http://www.dpni-sp.org)), Պերմի ([www.dpni-perm.by.ru](http://www.dpni-perm.by.ru)), Վոլգոգրադի ([www.dpni-volga.org](http://www.dpni-volga.org)), Տուլայի ([www.dpni-tula.org](http://www.dpni-tula.org)), Սանկտ-Պետերբուրգի ([www.dpnispb.org](http://www.dpnispb.org)) և մի շարք այլ մասնաճյուղեր:

Բացի կազմակերպության արդեն հիշատակված հիմնական կայքից, 2006 թ. հոկտեմբերից գործում է [www.dpni.tv](http://www.dpni.tv) կայքը, ուր տեղադր-

<sup>73</sup> Галина Кожевникова. «Союз казачества с неонацистами и ДПНИ.» Информационно-аналитический центр "Сова", 2006-09-26. <http://xeno.sova-center.ru/29481C8/800DB41>

<sup>74</sup> Максим Григорьев, «Fake-структуры против проекта «Россия». Русский Журнал, 2006-11-24. [http://www.russ.ru/layout/set/print/politics/docs/fake\\_structury\\_protiv\\_proekta\\_rossiya](http://www.russ.ru/layout/set/print/politics/docs/fake_structury_protiv_proekta_rossiya)

վում են կազմակերպության աշխատանքը լուսաբանող տեսահոլովակներ ու լուսանկարներ: ՃՌՀԻ Տյումենի մասնաբյուլի կայքը ([www.dpni72.org](http://dpni72.org)) իր տեսահոլովակների տարածման համար օգտագործում է մեր կողմից արդեն քննարկված YouTube ծառագրությունը: Համոզված ենք, որ մոտ ապագայում այս մարտավարությունը կսկսեն օգտագործել և ՃՌՀԻ համակարգի այլ կայքերը:

Տեղեկատվության ու քարոզչության տարածման համար արդյունավետ օգտագործում են նաև կազմակերպության անդամների՝ [Livejournal.com](http://Livejournal.com), [lj.rossia.org](http://lj.rossia.org) և [LiveInternet.ru](http://LiveInternet.ru) կայքերի վրա տեղադրված բլոգերը: Օրինակ՝ [LiveJournal](http://LiveJournal.com/dpni)-ում [dpni](#) խմբի կազմում ընդգրկված է 330 օրագիր<sup>75</sup>:

2006 թ. ապրիլի 22-ին, երբ Մոսկվայի մետրոյում ոռու ծայրահեղականի ձեռքով սպանվեց տասնյոթամյա Վիկեն Աբրահամյանը, LiveJournal-ում անմիջապես հակաքարոզզություն սկսվեց ընդգեմ հայերի: [doppel\\_herz](#) ծածկանունով գործող ՃՌՀԻ-ի անդամներից մեկը իր օրագրում տեղադրեց մի նյութ, որը բաղկացած էր սպանության կապակցությամբ հայկական [OpenArmenia.com](http://OpenArmenia.com) ֆորումում արված մեկնաբանություններից<sup>76</sup>: Սակայն այս «ծաղկաքաղն» արված էր մասնագիտութեն՝ ենթախորքից պոկված առանձին մեջբերումներն ընտրված էին այնպես, որ ընթերցողի մոտ տպագրություն էր ստեղծվում, թե հայերը դեմ են ոչ թե Փաշիզմին և բոնությանը, այլ ատելությամբ են լցված ողջ ոռու ազգի հանդեպ: Այս տեքստն այնուհետև արտատպվեց տասնյակ բլոգերում ու ֆորումներում և հաջորդ մի քանի շաբաթների ընթացքում բուռն քննարկումների առարկա դարձավ Խունետում:

### 2.3.3 Հայկական, աղրեցանական, բուրժական մասնակցությունը բլոգոսֆերայում

[Livejournal.com](http://Livejournal.com) և [Liveinternet.ru](http://Liveinternet.ru) օրագրային կայքերում հայկական և աղրբեցանական բլոգերի քանակը հասնում է հարյուրների: Գործում

<sup>75</sup> <http://community.livejournal.com/dpni/profile>

<sup>76</sup> «Паника в вольере», <http://doppel-hertz.livejournal.com/172453.html>

են նաև առանձին կայքերում տեղադրված օրագրեր: Աղրբեշանական բլոգերը՝ հիմնականում առօրեական բնույթ ունեն և ակտիվ հակահայկան գործողություններ առաջմն չեն ցուցադրում (օրինակ՝ [bakublog.com](http://bakublog.com), [blog.az](http://blog.az) և այլն): Հետաքրքիր է, որ LiveJournal-ում գործող community [livejournal.com/aze](http://livejournal.com/aze) աղրբեշանական խմբի մասնակիցներից մեկի առաջարկը՝ հակահայկական օրագրի ստեղծելու մասին, շրնդունվեց մնացած աղրբեշանցիների կողմից<sup>77</sup>: Աղրբեշանական բլոգերից հարկ է նշել [goingtoazerbaijan.blogspot.com](http://goingtoazerbaijan.blogspot.com) օրագրիրը, ուր ժամանակ առ ժամանակ տեղադրվում են քարոզչական նյութեր արցախյան հակամարտության վերաբերյալ: Ի դեպ, այս օրագրի հեղինակն աշխուժորեն տարածում է տեսանյութեր՝ նույնպես օգտագործելով YouTube տեսահոլովակների տարածման համակարգը:

Ակնհայտ քարոզչական բնույթ ունի և [armenians-1915.blogspot.com](http://armenians-1915.blogspot.com) բլոգը, որի հեղինակը ներկայանում է իբրև պոլսահայ, ինչը խիստ կասկածելի է: Այն առաջարկում է իր ընթերցողներին թուրքական քարոզչական մեքենայի հակահայկական մշակումների տիպիկ հավաքածու, մասնավորապես՝ անընդհատ արծարծում հայկական ահարեկչության թեման: Այլազգի ընթերցողներ գրավելու նպատակով հակահայկական նյութերը մեկնդմեղ հաջորդվում են թուրքիայի մասին գովազդային տիպի նյութերով, օրինակ՝ պորտապարի տեսահոլովակներով: Այս օրագրիրը նույնպես օգտագործում է YouTube-ը՝ տեսահոլովակները տարածելու համար:

Բլոգուֆերայում բավականին աշխուզ են նաև հայ օգտագործողները. գյություն ունեն եղեռնի մասին մի քանի բլոգեր, այլ բլոգերները նույնպես տարածում են հայանպատ նյութեր, միացյալ ուժերով մասնակցում զանազան ինտերնետային գործողություններում: Համացանցում գործող բազմաբնույթ հայկական բլոգերի, այդ թվում՝ LiveJournal-ի օրագրերի մի մեծ ցուցակ կա [ArmenianForums.com](http://ArmenianForums.com) կայքի վրա:

---

<sup>77</sup> <http://community.livejournal.com/aze/57316.html>

## 2.4. Հայքը համացանցային ՉԼՄ-Ներում

Անշուշտ, ցանցային ԶԼՄ-ների որակով, քանակով ու լսարանների չափով հայկականները զիջում են թուրքականներին, և դա բնական է՝ հաշվի առնելով երկու երկրների բնակչության քանակական տարրերությունը։ Համեմատել հայկական և աղբբեջանական ԶԼՄ-ներն ավելի բարդ է, քանի որ աղբբեջանական խոշորագույն ԶԼՄ-ների վիճակագրական տվյալները բավականին հակասական են, տեխնիկական որոշ խնդիրներ կան նաև հայկական լրատվամիջոցների կայքերի վիճակագրությունն ուսումնասիրելու հետ կապված։ Ամենամեծ ժողովրդականություն վայելող հայկական ցանցային լրատվամիջոցը [Panarmenian.net](http://Panarmenian.net)-ն է, ուր օրական այցելում է մոտ 3000 մարդ՝ համաձայն կայքի տնօրեն Ռուբեն Մուրադյանից ստացված տվյալների։

Համեմատության համար, աղբբեջանական [Day.az](http://Day.az) կայք այցելում է օրական մոտ 10000 մարդ, սակայն այս թիվն ընդգրկում է նաև աղբբեջանական կայքի ֆորումի այցելուներին, ինչը հնարավորություն չի տալիս պարզել միայն լրատվական բաժնի ընթերցողների քանակը։ Կայքը պատկանում է [ՄԵԼԻՍ.ՀԵՂԼԻՍԻ](http://ՄԵԼԻՍ.ՀԵՂԼԻՍԻ) միջազգային հարաբերությունների հանձնաժողովի ղեկավար Անար Մամեդհանովին։ Այսպես կոչված «Կայքի մեջբերման ինդեքսը» ուսուական Yandex որոնման համակարգում կազմում է 2300 միավոր ([Panarmenian.net](http://Panarmenian.net)-ինը՝ ընդամենը 800), ինչը նշանակում է, որ Yandex-ի համար [Day.az](http://Day.az)-ը հանդիսանում է շատ ավելի հեղինակավոր կայք, և որոնման արդյունքների ցուցակում այն ավելի առաջնային դիրքեր կզբաղեցնի։ Այսպիսով, շատ հաճախ Yandex-ում Հայաստանի մասին տեղեկատվություն փնտրելիս, օգտագործողները հայտնվում են աղբբեջանական այս կայքում, և ոչ թե հայկական կայքերում՝ ստանալով ապատեղեկատվություն Հայաստանի և հայկական Ավյուղի վերաբերյալ։ Մյուս կողմից, Google որոնման համակարգում [Panarmenian.net](http://Panarmenian.net)-ի դիրքերն ավելի ամուր են, քան աղբբեջանական կայքինը։

Հիշատակման արժանի են և մի շարք այլ հայկական համացանցային ԶԼՄ-ներ. «Ազգ» թերթի կայքը ([www.azg.am](http://www.azg.am) – ունի հայերեն, ուսւերեն,

անգլերեն, թուրքերեն տարբերակներ), A1+ ([www.a1plus.am](http://www.a1plus.am) – անգլերեն, հայերեն, ռուսերեն), ռուսալեզու «Голос Армении» ([www.golos.am](http://www.golos.am)) ու «Новое Время» ռուսալեզու թերթերի ([www.nv.am](http://www.nv.am)) կայքերը, «Երկիր» ([www.yerkir.am](http://www.yerkir.am) – հայերեն, ռուսերեն, անգլերեն), «Առավոտ» թերթի կայքը ([www.aravot.am](http://www.aravot.am) – հայերեն, ռուսերեն, անգլերեն), [Panorama.am](http://Panorama.am) համեմատաբար նորաստեղծ, բայց արագորեն թափ առնող լրատվական կայքը: Բավականին հաջող է թե՛ տեխնիկական, թե՛ տեղեկատվական առումներով Հայաստանի պետական ռադիոյի կայքը ([www.armradio.am](http://www.armradio.am) – անգլերեն ու հայերեն լեզուներով), առանձնապես աչքի են ընկնում որակյալ անգլերեն տեքստերը, որ, ցավոք, հազվադեպ է հանդիպում հայաստանյան ԶԼՄ-ներում: Հայկական համացանցային ԶԼՄ-ների քիչ թե՛ շատ լիակատար ցուցակներ կարելի է գտնել DMOZ կայքադարանում<sup>78</sup>:

Իուսական տեղեկատվական ծառայություններից Հայաստանի և ընդհանրապես Կովկասի խնդիրներին ամենից շատ անդրադառնում է Regnum գործակալությունը: Կարելի է ասել, որ հայ-ադրբեջանական և հայ-թուրքական թեմաներում Regnum-ի դիրքերն ավելի հայանպաստ են, քան թուրքամետ: Մյուս կողմից, գործակալությունն ակնհայտորեն փորձում է հայ-լրացական թշնամանք սերմանել: Օրինակ՝ 2006 թ. մարտին գործակալությունը բավականին աղմուկ հանած մի լուր տարածեց, թե իբր Վրաստանում բնակչության 18,5 տոկոսն է միայն դրական վերաբերվում ազգային փոքրամասնություններին, իսկ 72,2 %-ը համարում է, որ այլազգիներին պետք է վոնդել երկրից, մնացածն էլ ասիմիլացման կողմնակից են<sup>79</sup>: Հետագայում հայտնի դարձավ, որ իրական պատկերը ճիշտ հակառակն էր՝ 72,2 տոկոսն էին բարիդրացիական վերաբերվողները: Սակայն հայկական մամուլը, կարծես, չնկատեց հերքու-

<sup>78</sup> Հայերեն. <http://dmoz.org/World/Armenian/> Լուրեր

Առուսերեն. Top: World: Russian: Страны и регионы: Азия: Армения: Новости и СМИ  
Անգլերեն. [http://dmoz.org/Regional/Asia/Armenia/News\\_and\\_Media/](http://dmoz.org/Regional/Asia/Armenia/News_and_Media/)

<sup>79</sup> 72,2% - выдворение, 18,8% - "огрузинивание": соцопрос по проблемам нацменьшинств в Грузии. ИА REGNUM, 2006-01-17. <http://regnum.ru/news/573583.html>

մը, առավել կս, որ հենց ինքը՝ *Regnum* գործակալությունը, այն հրատարակեց բավականին երկիմաստորեն<sup>80</sup>:

2006 թ. սկզբին հայաստանյան տեղեկատվական դաշտում իր ներկայությունն ամրապնդեց և ոռուսական «РИА Новости» գործակալությունը՝ հայկական «ARKA» գործակալության հետ համատեղ ստեղծելով Newsarmenia.ru լրատվական կայքը:

Մեր տեղեկատվական դաշտում զգալի է նաև անգլալեզու մի քանի լրատվական կայքերի ներկայությունը. ArmeniaLiberty.org-ը՝ հաճախ ներկայացվում է որպես հայկական կամ հայաստանյան լրատվամիջոց, բայց ամերիկյան «Ազատություն» ռադիոկայանի ենթակառուց է, EurasiaNet.org-ը՝ Սորոսի «Բաց հասարակության ինստիտուտի» հովանու տակ աշխատող լրատվամիջոց է: ArmeniaNow.com կայքը, որի խմբագիրները թեպետ և օտարազգի են (ամերիկացի ու բրիտանացի), բայց կարծես թե իսկապես անկախ տեղեկատվական քաղաքականություն են վարում:

Մեր կարծիքով, լուրջ խնդիր է հանդիսանում այն, որ հայկական մամուլը՝ հաճախ է արտատպում համացանցային ապատեղեկատվությունը՝ առանց այն վերստուգելու: Ինում են դեպքեր, երբ հայկական մամուլում Հայաստանին վերաբերող լուրերը տրվում են ադրբեջանական կայքերի վրա հղումով: Վառ մի օրինակ՝ հայկական կայքերից մեկն արտատպել էր ադրբեջանական աղբյուրից մի նյութ՝ անփոփոխ թողնելով «այսպես կոչված «ԼՂՀ» տեքստը (այս՝, հենց այդպես՝ չակերտներով), ինչպես դա սովորաբար անում են հարեւան երկրի մամուլում:

Եվս մեկ խնդիր է այն, որ հայկական համացանցային լրատվամիջոցներից շատերի կայքերը տեղադրված են Հայաստանում: Բայց, քանի որ Հայաստանի թվային կապն արտաքին աշխարհի հետ, ինչպես արդեն նշել ենք, շատ թույլ է, ապա արտասահմանից այդպիսի կայքերը հաճախ գրեթե անհնարին է ընթերցել: Առայժմ՝ խնդիր միակ լուծումը կայքերն արտասահմանում տեղադրելն է:

---

<sup>80</sup> Ассоциация региональной медиа Грузии недовольна качеством собственного проекта? ИА REGNUM, 2006-02-13. <http://regnum.ru/news/589203.html>

## 2.5. Մասնավոր սեկտոր

Համացանցում հայկական ներկայությունն ապահովելու ոլորտում բավականին արդյունավետ են գործում անհատներն ու ոչ մեծ անկախ կազմակերպությունները՝ առանձնապես ցեղասպանության վերաբերյալ տեղեկատվության բնագավառում։ Մասնավոր սեկտորը, կարելի է ասել, հավասարապես բաղկացած է ինչպես Հայաստանի, այնպես էլ Սփյուռքի ներկայացուցիչներից։ Ավելին՝ որոշ նախագծերն իրագործվում են տարբեր երկրներում ապրող հայերի համատեղ ջանքերով։

Նշենք այս կայքերից, մեր կարծիքով, ամենակարևորները։

Խունետում ցեղասպանության մասին հայկական տեսակետը ներկայացնող ամենախոշոր հարթակն է ուսւալեզու [Genocide.ru](http://Genocide.ru) կայքը, որը ստեղծվել է Մոսկվայում ապրող մեր հայրենակիցներից մեկի կողմից՝ աշխարհի տարբեր երկրներից այլ կամավորների մասնակցությամբ։ Կայքում տեղադրված են տասնյակ գրքեր, հարյուրավոր փաստաթղթեր, լուսանկարներ։

Հատ կարևոր գործ է արվում [GenocideEvents.com](http://GenocideEvents.com) կայքում, որն օպերատիվ կերպով տրամադրում է ցեղասպանությանը վերաբերող՝ աշխարհում տեղի ունեցող միջոցառումների մասին տեղեկատվություն։ Բավական նյութեր կան [OurArarat.com](http://OurArarat.com) կայքում, որն ունի անգլերեն ու պարսկերեն բաժիններ, ընդ որում, պարսկերեն բաժնում կան ցեղասպանության պարսիկ ականատեսների վկայություններ։ Ուշադրության արժանի է և [Ermeni.org](http://Ermени.org) կայքը՝ թուրքերեն, անգլերեն, ֆրանսերեն ու հայերեն բաժիններով։ Փաստորեն, սա հայկական կողմի տեսակետը թրքախոս ընթերցողին ներկայացնող միակ կայքն է։ 2006 թ. հոկտեմբերի այն օրերին, երբ ֆրանսիան ընդունում էր հայերի ցեղասպանությունը ժխտողներին քրեական պատասխանատվության ենթարկելու մասին օրենքը, կայքը օրական այցելում էր 4000-5000 ընթերցող։ Հատ կարևոր է գերմանացիներ Զիգֆրիդ և Վոլֆգանգ Գուտերների ստեղծած [Armenocide.de](http://Armenocide.de) կայքը, որտեղ ցեղասպանության մասին գերմանական

պետական արխիվներից քաղված հարուրավոր փաստաթղթեր են տեղադրված (գերմաներեն և անգլերեն):

Աղբեջանում՝ հայերի գեմ կատարված ոճրագործությունների մասին պատմում է նույնպես անհատական ուժերով ստեղծված Sumgait.info կայքը: 2007թ. փետրվարից նախատեսվում է աշխատեցնել ևս մեկ անհատական նախագիծ՝ Press.Karabakh.info, որը լինելու է 1987–1994 թթ. մամուլում հրապարակված՝ Արցախյան շարժմանն ու պատերազմին վերաբերող նյութերի հավաքածու:

Հայքի մասին ընդհանուր տեղեկատվություն տրամադրում են Cilicia.com և «Հայ Էջ» ([www.hyeetch.nareg.com.au](http://www.hyeetch.nareg.com.au)) անգլալեզու կայքերը: Հայ հեղինակների, ինչպես նաև Հայքի մասին հնատիպ գրքերի էլեկտրոնային տարբերակներ կան ArmenianHouse.org էլեկտրոնային գրադարանում՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն: Շատ կան և ավելի փոքր, բայց, այնուամենայնիվ, օգտակար կայքեր, որոնց թվարկումը տվյալ հոդվածի սահմաններից գուրս է:

Վերոհիշյալ հարթակների հետ զուգահեռ, ամեն տարի համացանցում հայտնվում են նոր մասնավոր նախագծեր, որոնք սակայն սովորաբար երկար չեն գոյատևում, քանի որ ոչ բոլորն են ի վիճակի, առանց լուրջ ֆինանսավորման, տարիներով կայքեր վարել ու զարգացնել: Փաստորեն, անհատները ստիպված են աշխատել՝ ձախսելով իրենց գրեթե ողջ ազատ ուսուրսները (ժամանակ, դրամական միջոցներ): Սա իր հերթին նշանակում է, որ անձնական որևէ խնդիր ծագելու դեպքում, այդ մարդիկ մեծ մասամբ ստիպված են լինում ընդհատել իրենց հանրօգուտ և հայօգուտ գործունեությունը: Նույնիսկ մեծածավալ ու երկար տարիների պատմություն ունեցող այս տիպի կայքերը կարող են հանդամանքների գոճ դառնալ: Հիշենք, օրինակ՝ Արցախին նվիրված ամենահզոր կայքը՝ ArtsakhWorld.com-ը, որն արդեն մեկ տարի է, ինչ լիարժեք չի գործում և, ամենայն հավանականությամբ, վերականգնման ենթակա չէ: Եթե ժամանակին այս նախագիծը ստանար պետական չնշին աշակեցություն, ապա այն հաջողությամբ կգործեր և այսօր:

### 3. Լեզվի խնդիրը

Համացանցում հայկական ներկայության առաջընթացն արգելակող լուրջ գործոն է Հայքով հետաքրքրվողների մասնատվածությունն ըստ լեզուների: Այսօր հայկական կայքերի տերերի ու կայքավարների առջև ծառացած ամենակարենոր խնդիրներից է, թե քանի՞ և ի՞նչ լեզուներով սարքել կայքերը, որպեսզի հնարավորին շափ շատ բնթերցողներ ընդգրկվեն: Համացանցի հայկական հատվածում ամենատարածված լեզուներն են անգլերենը, ռուսերենը, հայերենը, որոշ շափով նաև ֆրանսերենն ու գերմաներենը:

Այս խնդիրն ակնհայտ է դառնում հայկական ֆորումներում, որոնց լսարանները, կախված լեզվային բաժանումից, միմյանց հետ գրեթե շեն շփվում: Ամերիկահայ ու կանադահայ երիտասարդության հաղորդակցման լեզուն հիմնականում անգլերենն է: Անգլախոսների խմբին են պատկանում նաև կիպրոսի և լիբանանի հայերից շատերը: Ռուսերենով գերադասում են հաղորդակցվել ԱՊՀ երկրներում ապրող հայերը, ինչպես նաև Հայաստանում բնակվող, հիմնականում միջին տարիքի օգտագործողների մեծ մասը, նաև վերջերս Հայաստանից կամ ԱՊՀ երկրներից ԱՄՆ ու Եվրոպա մեկնածները: Արևելահայերենը, որպես համացանցում հաղորդակցման հիմնական լեզու, ավելի շատ տարածված է Հայաստանի բարձր դասարանցիների և ուսանողների շրջանում:

Հայալեզու կայքերի ևս մեկ խնդիր է միմյանց հետ անհամատեղելի հին (ArmenSCII) և նոր (Unicode) կոդավորման ստանդարտները: Հնով գրված տեքստը դիտելու համար պահանջվում է լրացուցիչ ծրագիր տեղադրել համակարգչում: Թեև Unicode ստանդարտով պատրաստված կայքերի թիվն անընդհատ ավելանում է, սակայն հին կոդավորում օգտագործող կայքերի բաժինը դեռ բավականին մեծ է, և նույնիսկ որոշ նորաստեղծ կայքեր պատրաստված են հին ստանդարտով<sup>81</sup>: Պարզ է, որ միաժա-

<sup>81</sup> Տե՛ս, օրինակ՝ Ազգային ժողովի կայքը. [www.parliament.am](http://www.parliament.am), կամ էլ ՀՀ կառավարության կայքի հայերեն տարբերակը. [www.gov.am](http://www.gov.am):

մանակ և՝ մի քանի լեզվով, և՝ մի քանի ստանդարտով տարբերակներ ունեցող կայք ստեղծելն ու պահելը զգալիորեն ավելացնում են կայքը ստեղծելու և շահագործելու աշխատատարությունն ու ծախսերը:

#### 4. Կադրային խնդիր

Համացանցում հայկական ներկայությունը սահմանափակող թերևս ամենալուրջ խնդիրը կադրայինն է: Հաշվի առնելով, որ համացանցային տեխնոլոգիաների զարգացումը տարեցտարի ընդլայնում է գործունեության դաշտը, առանձին ուղղություններով նեղ մասնագիտացման կարիք է առաջանում: Արդեն բավարար չէ «ինտերնետ իմանալ» կամ էլ կայք ստեղծելու փորձ ունենալ: Այսօրվա համացանցն արդյունավետ օգտագործելու համար պահանջվում է տարբեր ոլորտների մասնագետների համատեղ աշխատանք:

Համացանցում տեղեկատվական գործունեությունը պայմանականորեն կարելի է բաժանել երկու մասի. առ. տեղեկատվության ստեղծում; բ. տեղեկատվության բաշխում (տարածում), ինչից և բխում է հետևյալ մասնագետների կարիքը.

1. Նախագծող ու ղեկավար փորձառու կադրեր:

2. Տեղեկատվություն արտադրող հեղինակներ (արևմտյան ստեղծագործական աշխատառներ քաջատեղյակ լրագրողներ, վերլուծաբաններ, հրապարակախոսներ, գիտնականներ), խմբագիրներ, բարձր պրոֆեսիոնալ մակարդակ ունեցող թարգմանիչներ, ձևավորողներ (graphic designers), նկարիչներ ու լուսանկարիչներ:

3. Տեղեկատվության բաշխման համացանցային համակարգեր ու հարթակներ ստեղծելու համար՝ վեբ-ձևավորողներ, ծրագրավորողներ, գովազդելու փորձ ունեցող մասնագետներ/հասարակության հետ կապի մասնագետներ (Public Relations-PR), ընդ որում, հենց համացանցային PR-տեխնոլոգիաներից տեղյակ, որոնման համակարգերը գովազդային նպատակներով օգտագործել իմացող մասնագետներ:

Ամենավատ իրավիճակը համացանցային տեղեկատվական նախագծերի ղեկավար կազմերի հարցում է. խիստ պակաս է գգացվում այնպիսի մարդկանց, որոնք ունակ են քիչ թե շատ խոշոր տեղեկատվական հարթակների ստեղծման գործընթացն ու դրանց հետագա աշխատանքը կառավարելու: Զկան նաև PR-մասնագետներ, հատկապես այնպիսիք, որ համացանցում աշխատելու փորձ ունեն: Հայաստանում «պիտո» ասելով հասկանում են ուժգին, բայց կարճատե աղմուկ բարձրացնելը (սովորաբար նախընտրական շրջանում ու մեծ ծախսերով): Իրականում հասարակական կարծիք ստեղծելը պահանջում է երկարատե ու խորն ազդեցություն, հիմնականում աննկատ և անուղղակի միջոցներով, ընդ որում, արդյունավետությունը միշտ չէ, որ ուղիղ համեմատական է ֆինանսավորման չափին: Պահանջարկ կա նաև միջազգային ստանդարտներով աշխատել իմացող հեղինակների: Ցավոք, համապատասխան կրթություն ու փորձ ունեցողների մեծ մասն էլ, հիմնականում ելնելով տրամադրվող առավել բարձր գործադրաբարից, աշխատում է հօգուտ ոչ թե հայության, այլ՝ օտարների:

### Եզրակացություններ

Համացանցը տարեցտարի ավելի մեծ դեր է խաղում տեղեկատվական դաշտում, սակայն հայկական ներկայությունը համացանցում թերի է, եղած ռեսուրսները օգտագործվում են ոչ արդյունավետ: Միևնույն ժամանակ, հակահայկական ներկայությունն անընդհատ ավելանում է:

Իրավիճակն առայժմ միիթարական է մասնավոր սեկտորում, բայց պետք է հասկանալ, որ սա ժամանակավոր երևույթ է: Կամավորների կողմից ստեղծված փոքր ու մշտական ֆինանսավորում չունեցող հարթակները մեծ մասամբ դուրս են մղվելու տեղեկատվական դաշտից Wikipedia-ի կարգի հսկաներով, որոնց տեղեկատվական քաղաքականության վրա ազդելու լծակներ գրեթե չունենք:

Իրավիճակը շտկելու և համացանցային տեխնոլոգիաների ընձեռած հնարավորություններն առավել արդյունավետ օգտագործելու համար անհրաժեշտ է գործել հետեւյալ ուղղություններով.

**Ա.** որակյալ կադրերի պատրաստում, ինչպես նաև կոմերցիոն սեկտորից փորձված կադրերի ներգրավում (առնվազն ուսումնական գործընթացում),

**Բ.** համացանցում տեղեկատվական կարճաժամկետ և երկարաժամկետ գործողություններ վարող կառուցցների ստեղծում. ցանկալի է, որ զուգահեռ գործեն միմյանց հետ մրցող միքանի կառուցցներ:

Վերը նշված երկու կետերը, ինքնըստինքյան, պահանջում են լուրջ դրամական ներդրումներ: Մյուս կողմից, Հայքի իրականությունում քիչ չեն դեպքերը, երբ հսկայական ծախսերով ստեղծված կառուցցները գործում են միայն թղթի վրա, դառնալով հերթական հայ մեծահարուստի փառասիրության անօգուտ մի հուշարձան կամ էլ դրամաշնորհ գրպանելու միջոց:

Այնուամենայնիվ, տեղեկատվական դաշտում (և ոչ միայն համացանցում) ստեղծված իրավիճակը մեզանից պահանջում է անհապաղ ու հետևողական գործողություններ: Աշխատանքը կարելի է սկսել, օրինակ՝ սեմինարների շարք կազմակերպելուց, ուր հետաքրքրված անձանց հնարավորություն կտրվեր ծանոթանալ համացանցում եղած տեղեկատվական նորագույն տեխնոլոգիաներին, կքննարկվեին կոնկրետ գործողությունների օրինակները, դրանց հաջողության կամ անհաջողության պատճառները: Այսպիսի մոտեցումը, իհարկե, միանգամից չի լուծի ներկայիս խնդիրները, բայց կարող է հետագայում ավելի լուրջ աշխատանք վարելու հիմք դառնալ:

### Հավելված

**Միջազգային հեռուստահաղորդագրային միության** (International Telecommunicaton Union – ITU) համացանց օգտագործողների **2006** թ.  
**վիճակագրության տվյալները**

Երկիր	Համացանց օգտագործողներ	
	Ընդհ. թիվը	% Բնակչության ընդհանուր թվի համեմատ
Հայաստան	150 000	5,03
Աղբբեշան	408 000	5,16
Վրաստան	176 000	3,75
Իրան	5 500 000	8,09
Թուրքիա	10 220 000	14,67

Եթե համեմատենք 2005 և 2006 թվականների տվյալները, ապա կնկատվի օգտագործողների քանակի զգալի նվազեցում, նաև ամանավանդ Աղբբեշանում, Իրանում ու Թուրքիայում: Սա, հավանաբար, պայմանավորված է հաշվառման եղանակի փոփոխությամբ. 2006 թ. հաշվի են առնվել միայն այն օգտագործողները, որոնք համացանցից օգտվել են առնվազն շաբաթական մեկ անգամ: Ցանկացած դեպքում Հայաստանը օգտագործողների քանակով շարունակում է զիջել իր բոլոր հարևաններին, իսկ տոկոսային հարաբերությամբ բոլորին, բացի Վրաստանից:

#### Աղյուսակ.

Рейтинг стран по количеству пользователей интернета. ADME.ru,  
 2006-12-19. <http://www.adme.ru/research/2006/12/19/13715.html>

Digital Life ITU Internet Report 2006. <http://www.itu.int/osg/spu/publications/digitalife/docs/digital-life-web.pdf>